



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2288

9(47.925)

9-13

1893

2010

49

191.54
9-13

Մ . Ա . ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

ԱՏԵՆԱԼԽՈՍՈՒԹԻՒՆՔ



ՆԻԿ ԵԱՐՎ
ՏՊԱՐԱՆ ԳԱԲՐԻԵԼԵԱՆ
1893

Ա. Ա. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

9147.925)

q-13

ԱՏԵՆԱԿԱՈՒԹԻՒՆՔ

91606



2001

ԱԼԻ ԵՈՐՎ

1893

6751-624

ԱՏԵՆԱԼԽՈՍՈՒԹԻՒՆ

Ա.Օ.Դ

Ատենախօսութիւններն զորս ներկայ
հատորիկով կ'ընծայեմ Հայ Երիտասար-
դութեան, վարժարանական ճառեր չեն
և ոչ ալ ակադեմական փայլուն շարաբա-
նութիւններ, այլ գործնական առիթնե-
րով և ընդհանրապէս որոշ նպատակաւ
խօսուած խօսքեր են:

Ես բարեաես մարդ մ'եմ: Ազգիս ա-
պագային վերայ, հայ ժողովրդին վերայ
խորին հաւատք ունիմ: Այս իմ ազգային
հաւատք խօլ երազատեսի չէ, այլ հաս-
տատուած է անձնական փորձառութեան
և գիտողութեան վերայ: Հայ հասարա-
կութիւնը, իբրև արեւելեան, յոյժ դան-
դաղ է, բայց եթէ գիտնաս ցունց տալ
նմա, նա կ'երթայ, նա շատ աւելի հետուն
կ'երթայ քան դու կարէիր յուսալ:

Բաւական թող լինի, ի հաստատու-
թիւն ասիցս, ծանօթացունել պարագա-
ներն Ա. Ատենախօսութեանս որ կը կը
«Զէյթուն» խորագիրն:

Այդ ատենախօսութիւն ըրած եմ ի
Նիւ Եորք, Հայկական Միութեան ժողովոյ
մէջ, 1887 Նոյեմբեր 26ին: Միութեան նա-
խորդ նստին մէջ առաջարկած էի որ ի

նպաստ Զէյթունի հրկիզելոց բան մ'ընէ-
ինք, և առաջարկս յդուած էր Գործ . Ժո-
ղովոյ : Նոյ . 26ի նստին մէջ հարցայ թէ
ինչ խորհեր էր Գործ . Ժողովս : Դեռ ևս
ինդիրն ի նկատ իսկ առած չէր : Երբ մի
քանի վայրկենի համար նիստն ընդհատե-
ցաւ, առանձին խօսեցայ ատենապետին
հետ, որ նոյն ինքն Տէլեմաք էքսէրճեան
նկարիչն էր, երբեմն Ազգ . Ժողովոյ ան-
դամ և փորձ մարդ : Նա յորդորեց զիս-
որ վայրապար չպնդեմ առաջարկիս վերայ .
«փորձառու չես դուն, ըստ, այս ժողո-
վուրդը այդպիսի բաներու համար ստակ
չտար» : «Դու թոյլ տուր ինձ, կրկնեցի,
որ ես խօսիմ այս երեկոյ, ես կատարեմ
պարտքս, թերես ժողովուրդն ալ կա-
տարէ զիւրն :»

Երբ ժողովս վերսկսաւ, խօսք առի
Զէյթունի մասին առաջարկիս կարեւորու-
թիւնը բացատրելու : Քանի մի վայրկեան
խօսած էի երբ ատենապետն ընդմիջեց
զիս . «ատենախօսն», ըստ, «ոչ թէ պարզ
զիս . «ատենախօսն», ըստ, «ոչ թէ պարզ
զիս . կը խօսի . ժողովս հաւանու-
թիւն ունի» : Ժողովս հաւանութիւն յայտ-
նեց և ես շարունակեցի, և կրկնապա-
տիկ խանդավառութեամբ : Ի վերջիս
բանիցս նետեցի սրահին մէջ արծաթ տո-
քանիցս նետեցի սրահին մէջ արծաթ տո-

ծափահարութիւնք արձագանք տուին
խօսքերուո և ոչ իսկ ստուերն տեսնուե-
ցաւ վիճի կամ վարանման : Պօղոս Յակո-
բեանի առաջարկութեամբ Յանձնախումբ
մի անուանուեցաւ իսկոյն, որ փառաւո-
րապէս յաջողեցաւ հանգանակել մօտ 300
առլարի գումար մի որ կ . Պօղոս Յանձ-
նախմբին ձեռամբ յղուեցաւ ի Զէյթուն :
«Հնա՞ր է» խորագրով ճառն խօսած
եմ 1889 Օգոստոս 17ին, ի Նիւ Եորք, Հա-
յերու ընդհանուր ժողովոյ մի մէջ, «Հա-
յոց Հայրենասիրական Միութեան» ի նը-
պաստ հանգանակութեան մի յորդորելու
համար : Ահագին էր սպաւորութիւնն զոր
կրեց ժողովս, և ոչ նուազ ահագին էր
գումարն որ շուտով ստորագրուեցաւ,
այն է 460 տոլար :

Այսպիսի փորձառութեանց երկար
շարք մի կրնայի պատմել աստ, բայց այս-
չափն կրնայ ծառայել իբրև օրինակ :

Հաւատաքը ոյժ է . և հաւատքով խօս-
ուած խօսքն անդիմագրելի զօրութիւն
ունի : Թող մեր մշակեալ երիտասարդք
հաւատան թէ հայ ժողովուրդը ըն-
դունակ է հայրենասիրական եռանդով
խանդավառուելու, տալու, զոհելու, սի-
րելու և ինքզինք նուիրելու : Եթէ ժո-
ղովուրդն, կամ անոր մեծ մասն անտար-
բեր կամ թերահաւատ կ'երեւի, յանցան-
քը գործիչներուն է : Գիտնանք թէ հայն

ամենայնի կարող և ամենայնի յօժար է,
եթէ ունենայ առաջնորդներ որոց ետևէն
երթալու անպայմանօրէն վստահի:

Հաւատով խօսուած, անկեղծ որտէ
բխած խօսքն ոյժ*է, ըսի: Բայց և զայն
պէտք է նկատել թէ ատենախօսութիւնն
ալ ազնիւ արուեստ մ'է որ ամեն ուրիշ
արուեստի պէս երկար կրթութեամբ կը
ստացուի: Թող մեր ուսեալ երիտասարդք
չկարծեն թէ կրնայ ոք հզօր խօսող լի-
չնիւ յանկարծ: Երկար արիներու ուս-
մանց և վարժութեանց պտուղն է ճարտար
հրապարակախօսութիւնը: Թէպէս ներ-
կայ հատորի մէջ չկայ և ոչ մէկ ատենա-
կայ խօսութիւն զոր ներելի լինի պերճախօս
խօսութիւն զոր ներելի լինի պերճախօս
անուանել, բայց չկայ և ոչ մէկ հատ որ
ունկնդրաց վերայ խորին տպաւորութիւն
գործած չլինի իւր անկեղծ եռանդ եամբը,
միանգամայն չնորհիւ այն հանգամանաց
որ երկարամեայ կրթութիւնը կուտայ: Ի
հարկէ կենդանի արտասանութեան մէջ է
ատենախօսութեանց անմիջական ազդե-
ցութեան բաւական կարեւոր մէկ մասն,
որ ի գիր չտառուիր:

Այս հատորիկ կը հրատարակեմ այն
յուսով թէ մշակեալ երիտասարդութիւնն
անդ գտնելով հաւատոյ և խօսքի զօրու-
թեան ապացոյցներ, աւելի պիտի հաւա-
տոյ ու աւելի տոկունութեամբ պիտի
գործէ:

Նիւ եռք
15 Փետր . 1893

Մ . Ս . ԳԱՅԲՐԻԿԵԱՆ

Զ Ե Յ Թ Ո Ո Ւ Կ

Ընկերներ,

Կելիկիոյ մէջ սով կայ: Սովահար քա-
ղաքաց միոյն թշուառութիւնը կատարեալ
եղեր է ահաւոր հրդեհով մի որ 250 խա-
նութ լափեր է և 800 տուն, հանդերձ ե-
կեղեցեօք և վարժատներով:

Այդ քաղաք արդէն հրոյ ճարակ ե-
ղած էր 1884ի ամառն: Նորէն այրեցաւ
անցեալ ամառ: Արդէն աղքատիկ քաղաք
մի ինչ խոր թշուառութեան մէջ պէտք է
ընկլմած լինի եթէ երեք արրուան մէջ
երկու անգամ այրի, երեակայեցէք: Երե-
ւակայեցէք անօթի տղայքը որ սա ցուրտ
եղանակին մէջ կիսամերկ կը դողան խեղ-
ձուկ խրճիթներու մէջ:

Ընկերներ, այդ թշուառ քաղաք, այդ
սովահար ու հրակէղ քաղաք Զէյթունն
իսկ է այն:

Շատ քաղաքներ տեսած եմ ու կը
ճանաչեմ Հայաստանի մէջ.— տեսած եմ
մէջ այլոց զերիզա, զբարերդ և զկա-

րին, բայց մի քաղաք միայն տեսած եմ բառին բոլոր նշանակութեամբն ՀԱՅ, քաղաք գրեթէ բոլորովին հայարնակ և հայբարոյ — այդ քաղաք՝ ԶԵՅԹունն է այն :

Հայաստանի ուրիշ բոլոր քաղաքաց մէջ Հայն է որ կը խօսի Թրքին թրքերէն լեզուով, և կը խօսի խոնարհաբար. միայն մի քաղաք կայ յաշխարհի որոյ Թուրք սակաւաթիւ բնակիչներն խոնարհութեամբ կը խօսին Հայուն և հայեվար կը խօսին. — այդ տարօրինակ քաղաք՝ ԶԵՅԹունն է այն .

Տաճկաստանի բոլոր ուրիշ քաղաքաց մէջ երբ հայ տղեկն զինուոր տեսնէ, կը փախչի տուն «նիզամ է» շչնչելով: Միայն մի քաղաք կայ ուր հայ տղայն ի տես թուրք զիւուորին՝ քար կը նետէ անոր աներկիւղ. — այդ անվախ քաղաք՝ ԶԵՅԹունն է այն :

Շատ քաղաքաց մէջ կան կրթեալ և քաղաքականացեալ Հայեր, պատուաւոր, ականաւոր, ունեւոր Հայեր. — իսկ զինուոր Հայեր՝ միայն մի քաղաքի մէջ կը դանուին — այդ քաղաքի մէջ տեսայ 11 տարեկան հայ տղեկ հրացան շալկած և հրացան արձակելու կարող: Այդ զինուոր ու պատերազմիկ հայ քաղաք՝ ԶԵՅԹՈՒՆՆ է ԱՅՑ :

Այո՛, ԶԵՅԹուն հայ մարտկաց ինչու՞ս

հայ մարդկանց քաղաքն է: Նա բանակներու դէմ ելած ու բանակներ կոտորած է ներկայ դարու մէջ իսկ երբ Հայեր պատերազմ և հրացան բառերէն կը զարհուրին: Մինչև քիչ տարիներ առաջ՝ թուրք իշխանութիւն չկար հան, քաղաքն տուրք չէր վճարէր, և կը պահէր իւր ինքնավարութիւն և անկախութիւն: Այժմ իսկ, ԶԵՅԹունի թուրք գայմագամը չհամարձակելով գիշերն մնալ առիւծուց քաղաքին մէջ՝ ամեն երեկոյ կը քաշուի այն ամուր պահականոցաց մէջ ուրկէ զինուորաց գնդեր և թնդանօթներ կը հսկեն ԶԵՅԹունի վերայ 1878էն ի վեր:

Ահա այս դիւցազն քաղաքն է որ իւր անկախութեան սիրոյն համարայնքան անկանոն ու կանոնաւոր գնդերու յարձակումներ, այնքան նեղութիւններ կրելէ յետոյ կը պատժուի նաև հրդեհով: «Կեպուրներ»ու քաղաքն յարմար կը դատուի ողջակէղ լինելու բռնապետութեան կոոց...: Կ'ուզեն թշնամիք որ անոր մոխիրն հօվերուն տան և ձեռս ի կուծս զարնելով ըսեն թէ ո՛չ ևս է ԶԵՅԹուն:

Ո՛չ, թշնամի, ո՛չ, չիք պիտի չլինի ԶԵՅԹուն:

Եթէ այրես զայն գեռ տասն անգամ, պիտի չինենք մենք զայն տասն անգամ:

ԶԵՅԹուն չպիտի կորնչի: Այն մեր մը լսիթարութիւնն է, եթէ չէ մեր գորու-

թիւն : Մեր նախնեաց ազատութեան դարերու և նոցա դիւցազնական չահատակութեանց կենդանի յիշատակարանն է այն :

Ընկերներ, 4000 տարի Հայկական իշխանութեան արքեն փայլեցաւ, և կիւլեկիս' տեսաւ այդ արեւու խոնարհումն ի մոռապս : Անդ ի կիւ կիկիս կայ սակայն լեռ մի ուր այդ մարն մտած արեւուն յետին նըշոյլքն իբր աղօտ վերջալըս կը մնան ցայսօր : Դէպ յայդ լեռ, յայդ կետ դարձուցէք ձեր ակնարկ, Հայեր, — այդ կետ, այդ վերջալըսոյ սիրալի կայսին — ԶԵՅ-ՉՈՐՑՅ է այն :

Երեւակայեցէք այժմ հրդեհի լեռնա-
բերձ բոցերն որք յարձակեր են խեղդելու
այդ միսիթարական նշոյներն :

Հայե՞ր, կրնա՞ք չգիթալ ԶԵՐԹՈՒՆԻ .
կրնա՞ք վարանիլ ձեր համականք արտա-
յայտելու այդ թշուառացեալ քաջաց :
Ենինենք զԶԵՐԹՈՒՆ, հայրե՞նակիցներ,
այս երեկոյ իսկ, աստէն և աստ տանք
մեր լուման, ծագեցունենք մեր սփոփիշ
շողեկը, մեր տաքուկ սիրոյ նշոյլը մեր ա-
նօթի և անպատճպար ելբարց զերայ :

կուտամ ես ինչ որ կրնամ. տուե՞ք և
դուք ինչ որ կրնաք, և եթէ չենք կրնար
չինել ամբողջ քաղաքն, չինենք մի մը-
նակ :

Եթէ չենք կրնար Աստուած Մինիւ ու

Հրամայել որ ստունամանիք դարնեն թշւ-
նամին կամ ամպեր շանթահարեն գժան-
տն, որ Եփրատ յարձակի և Երասխ որո-
տայ թուրք գնդերու գլխուն, կրնանք
մարդ լինիլ ու մեր ձեռք կարկառել տա-
ռապեւալ Զէյթունի և անոր ափին մէջ դը-
նել մի քանի տուար, մի քանի ոսկի, որ-
պէս զի նո հաց ունենայ ուտելու և հրա-
յան ունենայ ինքինք պաշտպանելու :

Յ Շինենք զՇէլթուն, Հայեր, և եթէ
չենք կրնպր շինել դնա, մխիթարենք,
ովոփենք, քաջալերենք տալով որքան որ
կրնանք.—մխիթարենք դհայ, գքաջ, գնա-
հատակ, զառիւծ ԶՇէլթուն:

Ա Ա Ի Պ

Հայե՛ր,

Հասած է այն ահաւոր ճգնաժամ յորում Հայ ազգն պարտի գերագոյն ճիգ մը ընելով փրկուիլ կամ կորնչիլ յաւիտեան։

Հայաստանի մէջ քրդային խժդժութիւնք և թրքային հարստահարութիւնք այնպիսի սարսափելի սստիճանի մի հասած են որ մեր ազգային ապագայն անմիջական վտանգի տակ կը դնեն։

Մինչ Հայաստան կը չարշարուի ի ձեռու խժից և դժից, մինչ Եւրոպական մամուլն կը լեցուի այդ չարշարանաց աղջկէ լրերով, մինչ Եւրոպական օտարապագի հազարաց ու բիւրուց սրտեր կը ձմլին ի լուր այս տառապանաց, մինչ կը լատըսթըն, Ճէյմըս Պրայս, Լորտ Քարնարվըն և այլք իրենց ձայներ կը բարձրացնենի նպաստ մեր թշուառ Հայրենեաց, մեք Նիւ Եորքի գաղթական Հայքս ի՞նչ կ'ընենք, մեք որ աղատ երկրի մի մէջ կը բնակիմք, մեք որ աղգասէր կամ մշակեալ կը համարուիմք։

«Ինչ կրնանք ընել» կ'ըսեն շատեր յուսահատ և տարտամ։ իմ պատասխանս որոշ է — կրմամք և պարտիմք ընել բազում իմ։ — Այս շաբթու Հայաստանէն նորեկ երկու անհատներու հետ կրկին և կրկին տեսնուեցայ, և ականատես ու ականջալուր վկայից բերնէն լսեցի ահաւոր բաներ։ Ես կ'ըսեմ թէ ո՛ և իցէ անհատ յորում մարդասիրութեան նշոյն կայ, չկրնար չզայրանալ լսելով այն անգթութեան գործեր որք կը կատարուին մեր հէտ Հայրենեաց վրայ։

Սմբատ պատանին մի քանի տող հայրենաւիրական ոտանաւորին համար կը բանտարկուի, ամէն նիւթական և բարոյական սփոփանքէ զուրկ՝ կը հիւանդանայ ու կը մեռնի բանտին մէջ։ Ուսուցիչ Սէգլեմեան այդ ոտանաւորին քանի մի բառերն սրբագրած լինելու ոճրին համար երկար ամիսներ դժընդակ բանտարկութիւն կը կրէ։ Անաթոլի Գօլէճին մէջ պատանւոյ մի գրասեղանին մէջ ազգային երգարան մի գտնուած լինելով, խեղճն աքսորի կը դատապարտուի։ Բասէնի դաշտին մէջ հարուստ եւ բարեսէր Հայու մի տան առջև կը ներկայանայ անօրէն ոմն և կ'ըսէ թէ զտանտէրն կուզէ տեսնել, և գնդակի հարուածով մի կը մեռցունէ զայն։ որդին կ'ընթանայ ի դուրս ի զայն հրազինին, և ահա ժանտ թուրքը

զնա եւս կը սպաննէ անդէն և անդ : Եղ-
բայրներ, այնպէս դիւրին եղած է Տաճ-
կաստանի մէջ Հայ սպանել ինչպէս հաւ :

Մշյ դաշտին մէջ բարեսիրա և բարե
կեցիկ Օհանն, ըստ որում Մուսա պէկի
դէմ օրինաւոր դիմումներ ըրած էր
թուրք կառավարութեան, ոմերիմ թըլ-
նամի ունէր զՄուսա : Մի քանի ամիս ա-
ռաջ երբ Օհան կ'ուղեւորէր դէպ յիւր
դիւր, գիւեր մի հիւր եղաւ քիւրա դիւ-
զի մի գիւղապետին . հոն Մուսա Հասաւ
ի վերայ, և մտնելով ուր Օհան կը գըտ-
նուէր, վառել տուաւ «օձախն» . միեց
խարուկին մէջ շամփուր մի, և երբ հրա-
շէկ եղաւ երկաթը, խօթեց զայն ի կուր-
ծըս Օհանի . ապա ուղելով պատճել այն
ձեռքերն որոնցմով Օհան աղերագիր բըռ-
նելով ստորագրած էր, վառոդ լեցուց ա-
փերուն մէջ և կրակ տալով պայշեցոյց :
Ապա քաշեց զ Օհանն դէպ ի վառարան և
բոցափայլ խարոյկներու դիզուն վրայ դը-
նելով խարուկեց ու ածխացոյց զգլուխն :
Մի՛ երեւակայէք այդ ահաւոր տեսարանն,
զի չէք կրնար դիմանալ Օհանի
. դիակն տարին նետեցին ճամբուն վերայ
դիւզէն դուրս :

Ի՞նչ էր յանցանքն Օհանին, ի՞նչ էր
մեղքն Բասէնի Հայուն և անոր որդւոյն,
ի՞նչ է այդ կարգի Հայ նահատակաց ո-
ճիրն : Սյն իսկ է զի գութ ունին, զի

կ'օգնեն իրենց խեղճ ու անպաշտպան
ազդակցաց, զի ստրկաբար չեն փաթթուիր
անդգամաց ուղերուն, զի, սիրա և գլուխ
ունին : Մուսա պէկ իր դիւրային ոճիրնե-
րէն քիչ օր յետոյ երբ դարձաւ ի Պոլիս,
քաղաքին մահմէտականք մեծ բազմու-
թեամբ ընդ առաջ գնացին նմա իբր յաղ-
թական գորավարի : Եղբայրներ, Տաճկաս-
տանի մէջ գթութիւն և մարդասիրու-
թիւն ոճիր է, իսկ գողութիւն, սպանու-
թիւն, հրձգութիւն և առեւ անդութիւն,
գովելի դիւրազնութիւններ են, ինչպէս
նաև շողոքորթութիւն, վասութիւն ու
մատնութիւն վարձատրելի առաքինու-
թիւններ :

Ո՛ ահաւոր վիճակիս : Եւ ո՞վ է այն
որ այս բռնութեան ու գերութեան վի-
ճակի մէջ ի Հայաստան կուզէ տակաւին
որ բնաւորութիւն, կրթութիւն, դպրոց,
եկեղեցի և աղօթք և բարոյական մնան
ու ծաղկին : Դեռ մի քանի ամիս առաջ
Մուսա պէկ Հայ դիւրապետի մի երկու
դստրերն առեւնդեց տարաւ և ապա այդ
դիւրացւոց ուղղեց հետևեալ հեգնական
շնորհակալութիւն «ինամի եղանք» : Մինչ
Հայ օրիորդն իւր հօր հետ կ'աշխատի ար-
տին մէջ, բուրաը կուգայ, կը կապէ նախ
զհայրն, ապա կ'առնու գուղութիւնն աւ կը
փախչի : Հայու աղջլիկներն կից գուղութիւն
ու լեռը կը տարուին ճիշդ որպէս թէդդա

7/11/1922



ուըն կամ ոչխար լինէին :

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ , այն որ
այս բաներ լսելով չզայրանար , այնքան
անսիրտ ու անպիտան է , որչափ այդ քըր-
դերը չարու դաժան են : Մին այս խըժ-
դըժութեանց բաւական պէտք է լինի
բորբոքելու արդար զայրոյթն ո՛ և իցէ
մարդու որ պատիւ ունի : Ուրեմն է՞ր
կամ և պատմեմ ձեղ անդժութեան դոր-
ծեր որոց մասին գուք եւս լսած էք
և ամէն օր կը լսէք : Եւ ի՞նչպէս կրնամ
ասել ձեղ անսասանելի պղծութիւններ
որք կը գործուին մեր ամօթխած քոյրե-
րու վերայ :

«Մատղաշ աղջիկն ու հարս հալաւ մի
չունի

Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի .
Էսպէս դրած ձեռքերն աչից ամչկոտ,
Գթու սիրու ողորմութեան է կարօտ .»

Գթու սիրու ողորմութեան է կարօտ
մեր խեղճ հայրենիք , բայց այն գթու և
սիրու որ ՍՐՈՎ կը գործէ :

Եթէ Հայկական սուրն կարմրի ան-
գութ քրդու արեամբ , անխիղճ թշնամ-
ոյ արեամբ , եթէ գտնուին մի քանի
հարիւր կամ մի քանի հազար Հայեր որք
մարտնչին Հայրենեաց ազատութեան հա-
մար , որք մարտնչին յաղթելով կամ
յաղթուելով գորութեամբ կամ տկարու-

թեամբ , բայց ՄԱՐՏՆՉԻՆ , կը փրկուի
Հայաստան : Այն հայ արիւն որ այդ
մարտի մէջ պիտի ներկէ հայ հովիտներն ,
պիտի յօրինէ այն կարմրագիր աղերսա-
գիր որ այլապէս աղգու և լսելի պիտի
լինի քան մելանով գրուածներն . և Եւրո-
պա պիտի լուծէ Հայկական խնդիրն , և
պիտի լուծէ ի նպաստ մեր : Յայնժամ
պիտի կրնայ մեր Հայրենիք միւսանդամ
ողջունել քաղաքական և աղգային կենաց
առաւոտն փառաւոր :

Այս է մեր քաղցր յոյս : Բայց չեմ
վարանիր ըսել առ վայրկեան մի , քան
զամենոյն չարատեսն ու . անկարելին են-
թագրութեանց : Դիցուք թէ մեր զին-
եալ յուսահատական ճգունք յանդին ի
զինուորական և քաղաքական պարտու-
թիւն չարաչար , և աերութիւնք զլանան
մեղ ստուերն անդամ աղգային ազատու-
թեան , յայնժամ թէկ աղգային ապա-
թան փրկել չեմք կրնար , սակայն փրկած
գայն փրկել չեմք կրնար , ՊՍ.ՏԻ.ԻՆ . այս' ,
կը լինիմք ԱԶԳԱՅԹԻՆ . ՊՍ.ՏԻ.ԻՆ . այս' ,
պատմութիւնն յայնժամ պիտի խօսի մեր
Հայրենեաց վերայ սապիտի արձանագրու-
թեամբ —

«Հայ ազգը չորս հազար տարիներ
փառաց և աղէտից մէջէն քալելով՝ եկած
հասած էր յժմրդ դար . բռնապետու-
թեան և բարբարոսութեան անդադար
հարուածոց տակ գետնատարած կը կենար

այս ծերունի, և կը խորդայր հոգեվարքի
մէջ անյօյս և անշարժ։ Եւ ահա երկնա-
շունչ իմն ոգւով ոգեւորեալ՝ գերազոյն
շարժմամբ խորտակեց շղթանելն, ի բաց
նետեց իւր պատուուն վերարկու, եւաւ
յոտս, մոնչեց իրիւ զառիւծ, և սկսաւ
պատերազմիլ. Զարկաւ, զարկաւ, զարկաւ,
և ինքն ալ խոպառ ուժաթափ ինկաւ և
փչեց վերջին չունչն. իւր փառաւոր երի-
տասարդութեան արժանի մահուամբ մե-
ռաւ այս վեհ ծերունի. Օրհնեալ եղիցի
յիշատակն դիւցազն Հայութեան։

Եղբայրնե՛ր, եթէ Հայութիւնն չկըր-
նար ապրիլ փառաւորապէս, կրնայ մեռ-
նիլ պատուաւորապէս։

Ուրեմն այլ ևս մի՛ հարցնէք այն տը-
խուր ու անսիրտ հարցումն՝ ըսելով «ի՞նչ
կրնանք ընել»։—ԿրնԱՄՔ ՄԵՌՆԻ՛Ն։

Եղբայրնե՛ր, Հայաստանի մէջ մեր
եղբարց հունձքն կ'այրեն, տուներն կը
քանդեն, եկեղեցիներն ու վանքերն ա-
խոռի կը վերածեն, հարսն ու աղջիկն
անհալաւ կը թողուն, առոյգն ու գեղե-
ցիկն լեռ կը տանին, արին ու բարին կ'ըս-
պանեն ու կը խարուկեն, և տակաւին կը
հարցնէք թէ ի՞նչ կրնամք ընել։

Կրնամք մարդու պէս զայրանալ և
մեր զայրոյթ կրնայ ցնցել մեր հայրենակ-
ցաց թմրած քաջութիւն։ Այս՛, նոցա ա-
րութիւն արհաւրաց անընդհատ ազդե-

ցութեան տակ ահաբեկ թմրած է, և
պէտք է որ Հայաստանէն դուրս, ազատ
երկրաց մէջ ցրուեալ Հայերս ոգեւորիչ
օշարակ մատուցանեմք մեր նուալեալ
հայրենակցաց։ Մենք ազատ աշխարհաց
մէջ գաղթական Հայքս պատասխանապու-
ութիւն ունիմք ահագին։ Հայաստանի
արիւնն Աստուած մեր ձեռքէն պիտի պա-
հանջէ։ Ուր են Մբատ և Օհան, ուր են
առեանդեալ մեր քոյրեր, ուր են բռնի
ուրացեալ մեր հարսունք, ուր են մեր
աքսորեալ հայրենակցք։—Այս հարցում-
ներ կ'ուղղուին մեզ այն Աստուծմէն որ
երբեմն հարցուց անգութ եղբօր մի «Ուր
է քո եղբայր»։ Այս հարցումն կուգայ
մեզ Անկէ որ ստեղծեց երկաթն ու կա-
պար, և կ'ուղէ որ սուր ու գնդակ գոր-
ծածենք մեր սուրբ կրօն ու մեր պատիւ
պաշտպանելու համար։ Հաւատացէք Հա-
յեր, թէ երբէ՛ք զայրոյթ աւելի արդար
եղած չէ քան զայն որ զմեզ կը բարկա-
ցունէ այս երեկոյ։ Երբէք պատերազմ
զայն պոր կոչուած եմք մղել մեր կրօնի
զայն զոր կոչուած եմք մղել մեր կրօնի
և մեր պատույ թշնամեաց դէմ։

Անցեալ օր երբ իմ նորեկ հիւրեր կը
պատմէին ինձ խծդժական գործողութիւն-
ներ, փոթորկեալ հոգիս դարձաւ առ Աս-
տուած և մի ուխտ ըրաւ սուրբ և յաւիտ-
ենական։ Զնոյն ուխտ այն օրէ ի վեր

իմ աղօթք ըրած եմ և կը կրկնեմ արտասուօք և զայրութիւ առաւօտ, կէս օր և երեկոյ։ Զայն կը կրկնեմ այժմ առաջի ձեր .—

«Կը հաւատամ թէ ի Քէն կուգայ ինձ այս զայրոյթ և այս ներշնչում։ Կը հաւատամ թէ առաջի Քո այնպէս անհաճոյէ հարստահարելցոց տկար համբերութիւնըն որչափ գարշելի է հարստահարողացն անզգամութիւն։ Կը հաւատամ թէ իՔէն կուգայ ինձ այն համոզում թէ կը պարտիմ կենացս մնացեալ օրերն նուիրել հայրենեացս ազատութեան Սուրբ Գործոյն։ Կ'ուխտեմ այժմիկ թէ աներկիւղ պիտի առնում այն ՍՈՒԻՐ զոր կը ցուցնես ինձ, ԵՒ ՅՈՒՐՉԱՓ ՀԱՅՐԵՆԻՔՄ ՌՈԼԲԿՈՒՄԾ Զէ, ԵՐԲԷՔ ՎԱՐ ԶՊԻՏԻ ԴՆԵՄ, ԶԱՅՆ, ԵՐԲԷՔ, ԵՐԲԷՔ։

Հ Ա Ա Պ Է

Հայրենակիցք,

Թրքական Հայաստանի մէջ արհաւիրք արհաւրաց կը յաջորդեն և ճշգնաժամն կ'առնու տակաւ աւելի ահաւոր բնութիւն։

Կարդացիք վերջին լուրերն։ Կարդացիք զայնս մերթ արտասուելով և մերթ զայրանալով որպէս ես կարդացի։ Կարդացիք թէ ի՞նչ անասելի խայտառակութիւն են գործած 15 թրքեր ի Տիգրանակերտ հայ գեռատի և գեղեցիկ կնոջ մի վերայ, որ յետոյ մեռեր ալ է այդխժդութեան հետևանօք։

Եւ ինչ քսանմելի ոմիրներու շարք մ'է զոր գործած է Մուսա Պէկ կոչուածը մեր հայ գիւղացւոց վերայ։ Մուսա Պէկ իր եղօր՝ Ժաղոյի, և Էօմէր Պէյի հետ անցնելով ի գլուխ իւրոցն, իբր հարիւր կոգւոց, կը մտնէ բռնի ի տուն Աղաճանի, ի գիւղն Խարց, Մշոյ և Պիթլիսի միջև։ Նախ կը սպաննէ Աղաճանի հայրը, կը

կողոպտէ տունը, և Աղաճանի կինն զԱլթուն և գուսարն զկիւլիւզար ալ առած կը չուէ . այս վերջինը աղջիկ 15 ամեայ, ցայդանոցով կը ճամբորդէ ձիւնին վերային բոկոտն քալելով, իսկ Ալթուն, խոնջած և ուժասպառ, կը մնայ ճանբուն վերայ: Երեք աւուր ճանբորդութենէ յետոյ զկիւլիւզար բռնի կը պսակեն ժազի հետ:

Այս պատահած է անցեալ Մարտի մէջ, և այս ամսոյ մէջ է, ինչպէս կը լիշէք, որ նոյն Պէկը խարկած էր զօհան:

Այդ Մուսա պէկ, Ապրիլի մէջ իւր մարդոց սոսուար գնդով, կը մանէ ի գիւղըն Տափավանք, կը սպաննէ Միրոյեան Յակոբի հայրը՝ զՄանուկ, և երբ Յակոբի կինն իւր երկու մանուկներով հանդերձ կ'ինայ յոտո Մուսայի՝ պաղատելով որ ինայէ էրկանը, վագրաբնոյթ Քուրան կ'առնու երկու տարեկան տղեկն և ութն ամսուան երախան ու քարին զարնելով կը սպաննէ զայնս: Ապա կը բռնաբարեն Միրոյեան բոլոր դեռատի հարսունքն ու օրիորդներն, թուով 17, և տունը կողովատելով կ'անցնին կ'երթան բարձր ի գլուխ....

Այս ամէնը սոսկալի են, բայց կայ բան մի աւելի և՛ս սոսկալի: Մուսայի թոյլ արուած է անպատիժ կատարել այս ամեն խժդժութիւն: Ինչ կ'ըսեմ. անպա-

տի՞ժ. Մուսայի պատիժ չկայ, պատիւկայ: Նա Պիթլիսէն ցԿ Պոլիս ճամբորդած է ոչ իրեկ գլխապարտ աւազակ այլ իրեկ Գլխաւոր ազնուական, և երբ ի մայրաքաղաք հասած է, ի կայուերական մայրաքաղաք հասած է, ի կայուերական մեծապատճեն աւարուած է և Սուլթանի մեծապատճեն արժանացած է: Աղերսագիր մարտնաց արժանացած է: Աղերսագիր մատուցանելով Փատիշահն՝ Ժպրհած է հայտարարել թ՛, ինքն իրեկ բարի և հայտարարիմ հպատակ Նորին Վեհափառութեան՝ շատ ծառայութիւններ մատուցած է երկրին ու կառավարութեան և խնդրած է որ իւր զրալարտիշք երեւան գան ու պատժուին:

Այս անհաւատալի դարձուածներուն վերայ հեգնօրէն պիտի ծիծաղէնքնը եթէ Հլինէին այնքան սոտոյդ ու այնքան սարսափելի:

Հայե՛ր, Հնա՛ր է որ Մուսա ոմն Հայ գիւղացւոց միսն ուտէ, տունն աւրէ, գիւղն այրէ, արիւնն թափէ, պատիւն կ'առնու այրէ, հաւատն բռնի ուրանալ տայ, բռնաբառէ, հաւատն բռնի ուրանալ տայ, կոյսերն առեւանդէ—և այդ գիւղացւոց մէջ չդանուի կտրիմ մի որ յերկուս կտրէ այդ դաժան վագրը:

Հնա՛ր է որ այդպիսի եղեռնագործը պատիւ և առաքինի մարդու, սուրբի վապատիւ յել ընդունելութիւն գտնէ ամեն ուրեք մահմետական երեւելեաց և պաշտօնէից կողմանէ :

Հնա՛ր է որ այն հռչակաւոր ոճրագործ, որ բոլոր մարմնով ու հոգւով դողդողալ պարտէր երբ Սուլթանի լոկ անունը լսէր, —յարքունիս հրաւիրուի, և իւր արիւնոտ ձեռքով պարծենկոտ բողոքագիր մատուցանէ Վեհապետին:—որ այդ մեծ աւազակ, այդ անգութ թշնամին խաղաղիկ Հայոց, այդ ժանտախտն հայ ոչխարաց, այդ արհաւիրքն քրիստոնէից, այդ անէծքն ու աւերիչն բովանդակ գաւառներու, այդ վագրն, այդ ճիւա՛զն, այդ գե՛ւն որու համար շատոնց Սուլթանն արքայական զայրութիւն գոռացած լինելու էր «կախեցէ՛ք», —ապրի՛, ի կառս բազմած մա՛ն գայ մայրաքաղաքի մէջ, ապրի պատով ու փառօք . . . :

Հնա՞ր է. այո՛, հնար է: Հայե՛ր, այդ ամենն տեղի ունեցած են, տեղի կ'ունենան դեռ Տաճկաստանի մէջ:

Եւ ի՞նչ կը հետեւի իրաց այդ վեճակէն:

Կը հետեւի թէ խելքը գլուխն եղող, փոքր ի շատէ հասկացողութիւն ունեցող մարդու համար հնար չէ Տաճկաց տէրութիւնն տէրութիւն կոչել, թուրք կառավարութիւնն կառավարութեան տեղ դընել և օսմանեան օրէնք, օսմանեան արդարութիւն ճանաչել:

Յոտից ցգլուխ նեխսած, փտած է օսմանեան պետութիւնն: Այս քսամնելի

պաշտօնական զեղծմանց առջև այլ ևս հընտր չէ բայց եթէ կուրից և յիմարաց խօսիլ կայսերական գթութեան, դատական արդարութեան և հայրախնամ կառավարութեան վերայ:

Իմ խիղճ կ'ապստամբի, ապստամբեր է արդէն այդ ժանտագործ բռնապետութեան դէմ. և այժմ նորէն կ'ապստամբի և կը բողոքէ:

Ո՛չ, յուլթանն չէ իմ սուլթան որ չկախեր զՄուսան:

Ո՛չ, ես չեմ կարող, և ոչ բանաւոր ոք կարող է յարգել կառավարութիւն մի որ ոչ թէ կը կառավարէ այլ քարէ քար կը զարնէ զժողովուրդն:

Այն Հայ պարտի իրեն պարտք եւ պատիւ համարել այդպիսի զեղծ կառավարութեան դէմ ելնել:

Եւ ամեն մարդ որ մարդ է ճշմարտիւ, պարտի համակրիլ մեզ, քաջալերել զմեզ, զի մեր դատ լոկ ազգային փառասիրութեան դատ չէ, այլ տարրական իրաւանց դատ, մարդկային արժանապատւութեան դատ, ընտանեկան պատւոյ դատ, խղճի ազատութեան դատ:

Եւ իրօք, ասկէ երկու ամիս առաջ ըստ անգլիացի զօրավար մի—թող գան, հարիւր Հայեր պատրաստ պատերազմելու, ես կը զօրավարեմ նոցա: Եւ դեռ քիչ օրեր տուած անգլիացի Տիկին մի, որում

նկարագրեցի, մեր վիճակ, յուղուած գուշեց. «Եթէ ես հոն լինէի տասը Քուրդ կը սպաննէի»:

Եյդպիսի միայն կրնայ լինել ամեն ազնիւ, արդարութեան կիրք ունեցող օտարականի զգացում:

Եւ եթէ արդարոսէր մարդիկ այնպէս են, ո՞րքան աւելի նա՛ որ հեղիակնէ օրինաց և առւիշն է խզի: Լաւ կ'ըսէ ուրեմն ազգային երգն որ կ'ըսէ —

Բա՛ւ է այսչափ ցած գերութիւն,
Օ՛ն, ո՞վ քաջեր, ի յաղթութիւն.
Երկի՞նք, ԱՍՏՈՒՄԾ մեզ են պաշտպան,
Ազա՛տ, ազա՛տ մեր Հայաստան:

Երկին, ԱՍՏՈՒՄԾ տան հրաման,
Ա՛հ, հրաման ազատութեան:

Թէ թուրք կառավարութեան անարդար լուծն խորտակել Հայաստանի պաշտանոցին արդար և առաքինական գործ է, գայն ոչ ոք կրնայ ժխտել. բայց թէ ինչ միջոցով և ինչպէս կարելի է կատարել զայդ գործ, է և պիտի մնայ ժամանակ մի փափուկ խնդիր:

Մեզ յայտնի պէտք է լինի գործոյն գժուարութիւնն ինչպէս պարզ է գործոյն արդարութիւնն: Հայաստան պարսի ազատ լինիլ. բայց մեր զայրութի բոցերուն մէջ ալ պարտինք չմոռնալ թէ յոյժ,

յոյժ գժուար գործ է ազատել զշայաստան:

Մեր փափաթ ազնիւ է, մեր վայրոյթ իրաւացի է, բայց և մեր գործ նոյնքան դժուար է, յիրաւի այնքան գժուար է որ շատերու կարձեօք անհնար է, անիրաշործ էլլի է:

Մեր ազգի ցրուած, պառակտեալ, աղքատիկ, ողորմելի վիճակին նայելով ումանք կ'ըսեն թէ Հայաստանի տղատութիւնն հրաշքի գործ միայն կրնայ լինիլ:

Իրա՞ւ է, Հայե՛ր, անհնարից կարգէ՞ն է մեր փափաթի իրագործում:
Կ'ընդունիմ ես զայդ: Եւ ե՛ս կը կրկնեմ թէ մեր հայրենեաց ազատութիւնն հրաշքով միայն կրնայ լինիլ. և աւելին հրաշքեմ. — թէ պիտի կատարուին հրաշքներ ու սկսոծ են կատարուիլ:

Բացէք աչքերնիդ, թերահաւատ Հայեր: և դու՛ւ մանաւանդ թուրք, բայց աչքդ ու տես այն հրաշալի փոխակերպութիւն զար կրել սկսած է Հայաստանեայն: թիւն զար կրել սկսած էր տկար, որոյ Տե՛ս, այն Հայ որ ոչխար էր տկար, որոյ բուրդն կը խուզէիր, կաթն կ'ըմպէիր ու միսն կ'ուտէիր, ահա անզգալապէս կերմիսն կ'ուտէիր, և խղճալի մայիւնի տեղ ճիպարանափոխ կը լինի, սմբակի տեղ ճիպարան մէջ, և խղճալի մայիւնի տեղ բան կը ցուցնէ, և խղճալի մայիւնի կարձակէ: Կը առիւծի ահաւոր մռնչիւն կարձակէ:

Լսե՞ս:
«Առանց արեան ազատութիւն չկայ»

30

կը գոչէ նա առիւծաբար :

Ես հրաշքի կը հաւատամ, Հայե՛ր, զի
հրաշք շատ տեսած եմ: Երկու տարի ա-
ռաջ այս սրահի մէջ կատարուեցաւ
հրաշք մի: Այն երեկոյին կ'առաջարկէի
հանդանակութիւն մ'ընել ի նպաստ Զէյ-
թունի վերաշնուրթեան: Փորձառու ոմն
գրեթէ ծաղրեց զիս պարզմառութեանս
համար, բայց նոյն անձն կէս ժամ յետոյ
տեսնելով ժողովրդեան անհաւատալէ: ա-
ռատաձեռնութիւնն, հրապարակաւ, իր-
բե ատենապետ ժողովոյն յայտարարեց թէ
«մեծ մեղք մի գործած պիտի լինէր, ե-
թէ թոյլ տուած չըլլար որ ատենախօսէի
Զէյթունի մասին:»

Հաւատացի յայնժամ, կը հաւատամ,
և աւելի՛ ես կը հաւատամ այս երեկոյ:
Եւ կ'ըսեմ թէ հրաշք մ'ալ այս երեկոյ այս
ժողովս պիտի գործէ:

Կը տեսնէք տոմսերու սա դէզն. այս
թուղթէ, և պիտի փոխէք զայն յոսկի:
«Հայոց Հայրենասիրական Միութեան»
ի նպաստ դրամ պիտի տանք այս երեկոյ.
և շատ պիտի տանք. այնքան շատ որ լը-
սողներն դժուար հաւատան:

Այս է հրաշքն զոր կոչուած եմք կա-
տարել այս երեկոյ:

Հսենք պիտի այս երեկոյ Հայաստանի

Ումիմ ես ոսկի, եմ ոսկու մաղամ,

Ունիմ ձեռք ջըլոս, և սիրտ անվեհեր:
կուտամ ես ոսկի, կ'առնում հրացան,
Ազնիւ խորհուրդներս թող շուտ իրանան:

Հսենք ու տանք, Հայե՛ր, կատարենք
այս երեկոյ հրաշք մի, ու շարունակենք
կատարել փոքր ու մեծ հրաշքներ մինչեւ
կատարուած տեսնենք հրաշքներու փա-
ռոր կատարուած — Հայաստան դրախտի փո-
խուած. գերի հայրենիքն ազատուած:

Մասսայ ճակատէն մէգը հեռացած
Մանուկ-Հայաստան ալոաքի կանդնած:

հանուր կառավարիչս Հայ Վելայէթից ,
Հրամայելով որ նախանձաւոր լինին իրենց
մենաշնորհներու և չվատացունեն գթուր-
դըս որոց ծառայութիւններն կրնան պէտք
լինել ի գիպել պատերազմի : Կը վախ-
ցուի թէ այդ ծանուցագիր պատճառ պիտի
լինի քրիստոնէից հարստահարութեանց :»

Ո՛վ որ 1877ի ոռուսինդթուրք պատե-
րազմին քրդական երեսյթներն կը յիշէ ,
կրնայ որոշ տեսնել թէ ինչ տեսող ծա-
ռայութեանց կ'ակնարկէ Դուռն յիշեալ
շրջաբերականի մէջ : Անաշառ և ակա-
նատես օտարական թղթակցի գրութիւն-
ներէն ուսած՝ կրնամ պատմել ձեզ այդ
անցքերու համառօտութիւնն և մեկնել
շրջաբերականի իմաստն :

(1)Այս ատենախօսութիւն Հայոց ընդ-
հանուր ժողովոյ մէջ ընելէ յետոյ , ԳԵԼ-
խաւոր իրողութիւններն համառօտ յօդ-
ուածի ձեռվ հրատարակեցի «Նիւ երբ
Հէրըւայի մէջ , (թ . 9 Սեպտ . 1889) : Մի
քանի օր յետոյ նոյն թերթի մէջ երեցաւ
ՌԱԶԻՒՆկթընի օմանեան ներկայացուցիչ
Մավրոյանի Պէյի խեղճ մէկ հերքողականն
որ ոչ ինչ կը հերքէր : Ատենախօսութեանս
ինչպէս և յօդուածիս մէջ յիշուած իրո-
ղութիւններն առած եմ նամականիէն լըն-
տըն Թայմզի թղթակցին որ 1877ի ոռու-
սինդթուրք պատերազմի դաշտէն դրած է
դրեթէ ամեն բանի ականատես լինելով :

Քրդերն կամաւորներ էին , իրենք գի-

ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ⁽¹⁾

Ազնիւ Հայրենակիցք .

Ձեզ ծանօթէ յ յուսամ այն կարեւոր
հեռագիր որ անցեալ օր Տփղիսէ առ Լոն-
տոնեան «Տէյլի Նիւզ» ուղղեալ էր և որ
ամերիկայի օրաթերթից մէջ ալ երեցաւ :
Ահաւասիկ թարգմանութիւնը .— «Դուռն
գաղտ շրջաբերական մ'է ուղղեր առ ընդ-

(1)Այս ատենախօսութիւն Հայոց ընդ-
հանուր ժողովոյ մէջ ընելէ յետոյ , ԳԵԼ-
խաւոր իրողութիւններն համառօտ յօդ-
ուածի ձեռվ հրատարակեցի «Նիւ երբ
Հէրըւայի մէջ , (թ . 9 Սեպտ . 1889) : Մի
քանի օր յետոյ նոյն թերթի մէջ երեցաւ
ՌԱԶԻՒՆկթընի օմանեան ներկայացուցիչ
Մավրոյանի Պէյի խեղճ մէկ հերքողականն
որ ոչ ինչ կը հերքէր : Ատենախօսութեանս
ինչպէս և յօդուածիս մէջ յիշուած իրո-
ղութիւններն առած եմ նամականիէն լըն-
տըն Թայմզի թղթակցին որ 1877ի ոռու-
սինդթուրք պատերազմի դաշտէն դրած է
դրեթէ ամեն բանի ականատես լինելով :

բենք հոգացող կամաւորներ, զի իրենց
զգեստ, ուտեստ, վրաններ և ձիու կերն
բնաւ բարեխնամ կառավարութենէն չէին
սպառեր :

Քրդերու քաջութիւնն ալ կը հաւա-
սարէր իրենց անձնուիրութեան : Նոցա
քաջութիւն ապացուցուեցաւ նախ Յունիս
6 (1877)ի ճակատամարտին մէջ, Թաղիր
բլրոց վերայ, ուր Մուհամմէտ փաշա զար-
նուեցաւ Տէր-Ղուկասոփի հետ : Խաղմին
ոկսելէն ժամեր առաջ եկան հասան քուրդ
հէծելազօրքն : Իրենց տարօրինակ հա-
գուստով և տարօրինակ աւիւնով կը ցուց-
նէին թէ ուրիշ հասարակ զինուորաց նը-
ման չէին : Ահա իրենցմէ մին գունդէն
գուրս կ'ելնէ ձին վազցունելով, սրարշաւ
կ'ընթանայ, նիղակն կը ցնցէ, ակուներն
կը կրծտէ և սոսկալի հայհոյանք կ'արձա-
կէ թշնամւոյն դէմ որ բարեբաղդաբար
շատ մօաը չէ : Եւ ահա ուրիշ մ'ալ անոր
օրինակին հետեւելով բանակէն գուրս
կ'արշաւէ . ուրիշ մ'ալ, և հետզհետէ բ'լոր
գունդն դաշտը տարածուելով կը դառնայ
ու կը դառնայ ձիարշաւ, որպէս մեծ դետ
մի որ իւր որոտագոչ յորձանաց մէջ
կուլ տալ կը սպառնայ ամեն բան : Լեռ
ձոր կը թնդան այդ քրդական հայհոյա-
նաց և կատարելու յաղթութեանց երդե-
րու ոռնաձայն գոռում գոչումով : Թո՛ղ
գայ Տէր-Ղուկասոփ եթէ կրնայ :

Երբ հայ դօրավարն եկաւ իւր բանա-
կաւ, Քուրդք զարմանալի կերպիւ կատա-
րեցին իրենց զինուորի պաշտօն . . . , ո-
մանք դասալիք լինելով և այլք պահուե-
լով, զի յիրաւի երբ տեսան թէ Ռուսք
սաստիկ ջարդ կուտան Օսմանցւոց, մեր
Եռոնցիք մեծ մասամբ թողուցին բանակը
ու հեռացան, իսկ մնացեալք իրենց պատ-
ուական անձերը ժայռերու ետե լաւ պա-
հելով՝ երբեմն երբեմն ատրճանակ արձա-
կեցին օդը գողացունելու . . . :

Քրդերն այսպէս իրենց սրառառութիւն
ցուցած լինելէ յետոյ, առիթ ունեցան,
Յունիս 25ին, ցուցնելու նաև իրենց զի-
նու որական ճարտարութիւն և իմացողու-
թիւն : Ֆէյզի փաշա, հունգարացի ու-
րացեալն, հրաման ըրաւ որ Քուրդ
հեծելազունդն բլուրն ի վար արշաւեն և
նեղն ինկած ուռս հետեւակաց վաշտն ջար-
դեն : Քրդերն փոխանակ ձորն ի վար
յարձակելու որով կրնային այդ շարժում
ապահովապէս կատարել, յառած վազեցին
բլրոյն բարձրութեան երկայնութեամբը՝
լիսվին նշաւակ ընելով իրենք զիրենք
ուռւսական ոմբակոծութեան, այնպէս որ
գեռ բլրէն վար չիջած՝ իրենցմէ 70ը գե-
տին փոռեցան, և մնացեալք զարհուրած
ետ դարձան, և այն օր այլ ևս պատե-
րազմի չմասնակցեցան :

Քրդերն արի և անձնուէր լինելէ

զատ, հմուտ են քաղաքակիրթ պատերազմի օրինաց։ Զայդ ու ապացուցին ի Պայտիս։ Ռուսական բանակն Պայտիսէն ետ քաշուած էր՝ միջնաբերդին մէջ թողլով պահապան գունդ։ Թուրք բանակն պաշարեց բերդն, և բերդին ջուրն ալ գարձուցած լինելով մեծ նեղութեան մէջ ձգեց Ռուսերն։ Վերջապէս բերդին և օսմ. բանակին ներկայացուցիչք հաշտութիւն խօսելով և համաձայնելով, ռուս բերդապահներն յանձն առին անձնատուր լինիլ։ Սյն պահուն երբ ռուս զօրքն բերդէն գուրս ենելով կը յանձնէին իրենց զէնքերն թուրքաց ու կը յառաջանային օսմանեան զօրաց երկու շարերու մէջտեղէն, յանկարծ կը հասնին քուրդ և ճեծելսզօրքն, հազարներով, կը յարձակին անձնատուր եղած Ռուսաց վերայ և կը ջարդէն։ 230 հոգի այդպէս կստորեցան, իսկ մնացեալք գուրս չելան կամ զարդէն փութացին բերդը քաշուիլ, և այնորէն փութացին բերդը քաշուիլ, և այնուհետեւ բանակցիլ անգամ չուղեցին թուրքաց հետ։

Դոյն այդ Քրդերն են որ Յունիս 13ին, փոխանակ նահանջող Ռուսաց ետեէն վաղելու ու ջարդելու, ինկան Պայտիսի անզէն ու անպաշտպան Հայոց վերայ և 2,400 զողի կոսորեցին, այր, կին, ծեր ու տըզայ, և քաղաքն կրակի տուրին։ Այդ Քրդերն են որ Ալաշկերտի դաշ-

տին 122 գիւղերուն ամենն, բաց իննէն, անապատ գարձուցին, կողոպտեցին վանքեր, կապտեցին գիւղեր, ինչ որ չկրցին հետ տանել՝ այրեցին կամ գետը լեցուցին՝ որ գիւղացին հայ շունենայ ուտելու։ մինչև իսկ փողոցներու մէջ կանանց ու կոյսերու պատմիւր բռնաբարեցին, և հարիւրաւոր գեղեցիկ աղայք ու աղջկունք առին տարին լեռներն ու քրդացուցին։

Ի զուր աստի անտի բողոքներ կ'ուղղուէին օսմանեան հրամանատարին որ զսպէ բարբարոսներն։ Մինչ Քրդեր այդ քոտմնելի ոճիներն կը գործեն, կը կոտրեն, կ'այրեն կը պղծեն ու կը մեռցունեն, անդին օսմանեան հրամանատարն լոփի կը կենայ ի զնին։ Պապանձի՛ս դու։

Եւ դուք, անսիրտ ու անմիտ Քրդեր, կեցէք հոստ ձեր կրօնակցաց քով, պահմալ սպասեցէք. անմեղ զոհերու արիւնը կը բողոքէ, և նոցա ձայն կը լսուի շտառով։ Փութով կուգայ քաջազգի մեծ զօրավարն և կուտայ ձեր վարձք լիսւլի։

Կուգայ, կուգայ Տէր Ղուկասոֆ, կուգայ նա արշալուսին հետ կանուխ, կայծակնաբար կը հասնի ու կը փայլատակէ Պայտիսի առջև։ Ո՛ Մինիփ փաշա՛, ինչու այդպէս կը թողուս ըլուրդ ու ետ կը քաշուիսոր իսմայիլի հետ միանա՞ս։ Ո՛չ, չեմ թողուր որ նահանջես, կ'որոտայ

աննմանն Տէր-Ղուկասով, ու յառաջ ժայթքեցունելով իւր ձիտոր գունդը՝ կը խափանէ Միւնիֆ փաշայի նահանջը: «Ո՞ն, պատերազմինք» Թուրքք կ'ուտեն ահա գին ջարդ, Թուրդք ըստ սովորութեան կը փախչին, Իսմայիլ փաշայի կողմանէ յղուած ութ գունդերն, 1200 հեծեալներն ու թնդանօթներն կը հասնին և ուզդմը կը շարունակուի յժամ 5, յորժամ թրքաց բանակն խառն ի խուռն կը փախթրքաց բանակն վերայ 1000 մեռեալ, չի, թողլով դաշտին վերայ 1000 մեռեալ, 3 թնդանօթ ու 800 գերի ի ձեռս հայ դօրավարին:

Հայրենակիցք իմ, այս համառօտ նկարագրութիւն յստակ կը ցուցնէ ձեզ թէ Քրիեր ինչ դեր կատարեցին 1877ի պատերազմին մէջ կամ թէ ըստնք պատերազմէն դուրս: Նոքա օսմանեան բանակին կը հետեւէին իրբե անոր ստուերը՝ անզօր ու խուսափուկ Տէր Ղուկասովի հեծեալառ զօրաց առջև, և միայն յայնժամ այդ զօրաց ստուեր դիւաչունչ մարմին կը չարաշուք ստուեր դիւաչունչ մարմին կը լինէր յորժամ իյնար հայ դիւղերու վերայ:

Դաեւ տեսաք թէ Քրիեր վատ են՝ ոչ արի, և զինուորական շարժումներու տարարական հասկացողութենէ իսկ զուրկ են: Բ. Դուռըն քաջ գիտէ թէ Թուրդք, ինչ կ'արժեն իրբե զինուոր, և որոշ միտք ունի գործածելու զայնո գայու պատե-

րազմին մէջ, ինչպէս գործածած է յանցելումն: Բ. Դուռն Ռուսաց դէմ պիտի ելնէ կանոնաւոր զօրօքն, ու Հայոց դէմ անկանոն զօրօքն, — Քրդաց անգութ և անկիրթ և անօրէն գնդերովն:

Եւ մեք պիտի անգամ մ'եւս թոյլ տա՞նք որ այդ բարբարոսք իյնան մեր խաղաղ գիւղացւոց վերայ: — որ Քրդի վատ ցեղն՝ անպաշտպան գտնելով Տէր-Ղուկասովի քաջ ցեղն՝ կոտորէ զայն ոչ-խարի պէս:

Ոչ. մեք, արտասահմանի Հայերս զէնք պիտի ունենանք ու զէնք գործածելու վարժութիւն, և ինչ որ մեք ունենամք ու կարենամք պատերազմի պատահականութեան ատեն, պիտի ունենամք ու կարենամք Հայաստանի Հայոց համար, մեր հայրենեաց համար:

Այո՛, պէտք է որ մեք փութով սկսինք ոովրիլ մարտնչելու և յաղթելու արուեստը, որպէս զի զարթնուն ի մեզ քնացածքաջեր, Տիգրաններ ու Վարդաններ, — որպէսզի կարենանք, ի զսեմ աւուրն, Տիգրանայ պէս զարնել կամ Վարդանայ պէս զարնուիլ — որպէս զի ապացուցաննենք Եւրոպայի թէ մեք ալ, թէև գերազանցապէս խաղաղասէր ժողովուրդ, գիտեմք մահ յանձն առնուլ անտանելի բոնապետութեան դէմ կոռւելու համար — և որպէս զի հաստատենք թէ Տէր

զուկասոփի ու Մելիքովի ազգակիցք
կրնան, եթէ ուղեն, լինիլ գերազանց զին-
ուորներ, և թէ, թէ չկազմեն վիթխա-
րի բանակ, կրնան կազմել արի բանակ:
Եղբայրներ, ոչ թէ միայն կը պար-
տիմք ՅՕԺԱՐ լինիլ պատերազմելու, այլ
և պէտք է ԳԻՏՆԱՆՔ պատերազմիլ: Այս
կրկին պայմանաւ է որ պիտի լինինք ան-
դիմադրելի ուժի տէր: ուժովալով և
մեր զօրութեան գիտակցութիւնն ունենա-
լով է որ պիտի կարենանք անտարբեր
աէլութեանց և կատաղի թշնամեաց ըսել
—Եթէ Պէռլինի դաշնագրայն 61դ յօդ-
ուածն մեռեալ տառ է, մեք Հայքս կեն-
դանի եմք: Եթէ չէք տար մեր արդար
պահանջ, մեք մեր ձեռօք կ'առնունք
պայն: Եթէ մեր յառաջդիմութեան շաւ-
դին վերայ կը մնաք յամառեալ, ի բաց
կը վանեաք զձեզ. Եթէ մատ վերցունէք
մեր վերայ, կը զարնենք. Եթէ գեռ ոչ-
խար կարծելով զմեզ դանակ առնուք
մեզ մորթելու, կը ցուցնենք ձեզ առիւծի
ժանիք ու ճիրաններ, և զձեզ յօշ յօշ կը
պատառեմք: (1)

(1) Այդ ատենախօսութենէն մի
քանի օր յետոյ սկսանք յաջողապէս կազ-
մել զինուորական կրթութեան ընկերու-
թիւն կամ «Արարատեան Գունդն»», որոյ
անձնուէր մարդիչն եղաւ երկար ամիսներ
զարար Գ. Գասպարեան, հեղինակն «Մար-
Տիար Գ. Գասպարեան» ի:

ՀԱՌԿ

ԽՈՍԵՑԵԱԼ Ի ՃԼՌԶԻ ՍԻԹԻ ՀԱՅԹԱ

Ի 6 Հոկտ. 1889)

Հայրենակիցք,

Յորմէ հետէ Հայ անունն Պէռլինի
դաշնագրութեան մէջ մուտ գտած էր,
երբէք այնքան տարբեր տարբեր երկիր-
ներու մէջ խօսուած չէր Հայոց վերայ որ-
քան այս տարի կը խօսուի: Եւրոպեան
և Ամերիկեան Մամուլն հարիւրաւոր սիւ-
նակներ նուիրած է Հայկական Խնդրոյն և
Հայկական լրոց:

Պատկառելի պետական այրն այն, Կը-
լատութըն, ոչ միայն Բրիտանական Բառ-
լամէնթին մէջ խօսեցաւ վեհօրէն ի
պաշտպանութիւն Հայոց, այլ և մի քանի
շաբաթ առաջ յղեց առ «Տէյլի նիւզ» յա-
տուկ նամակ մի՝ հանդերձ թրքական
հարստահարութեանց երկար տեղեկա-
գրով: Այս հրատարակութիւն սարսուռ
ազդեց Սուլթան Համիտի և՝ իբրև ահա-
գին ապտակ՝ ցնցեց Բ. Դրան յամառ գը-
լուխն:

կեղծեաց ահագին գործանոց մի , յորմէ
դուրս եկող արտադրութիւնն որքան և
փայլուն լինի , դարձեալ ոսկի չէ :

Մեք գիտեմք , և աշխարհ ալ գիտէ ,
թէ թուրք կառավարութիւնն բացարձա-
կապէս անկարող է փոխել իւր հայատեաց
քաղաքականութիւնն և ո և է փոքր կամ
մեծ բարենորոգում իրագործել Հայաստա-
նի մէջ : Թուրք կառավարութիւնն զայդ
ընելու այնպէս անկարող է որպէս սողունն
թուշելու , և որպէս սեն իւր մորթ սպի-
տակ գործելու :

Թուրք ցեղն զայս առատօրէն ապա-
ցուցած է և շարունակ կ'ապացուցանէ :
Այժմ իսկ երբ բովանդակ Եւրոպա զայրա-
ցեր է թրքական բարբարոս վարչութեան
դէմ , տակաւին հարստահարութիւնը կը
շարաւնակաւին . տակաւին Մուսայի եղայ-
րը ժաղօ կը յարձակի վարդենիս գիւղին
վերայ . տակաւին յերիզա հայ երեւելաց
տներն կը խուզորկուին և Շէվքէթ փա-
շա , երիզայի կառավարիչ , կը յայտարարէ
թէ՝ եթէ ստուգուի թէ Հայք ապստամ-
բութիւն կը նիւթեն , կանոնաւոր զօրօքն
ու մահմետական ժողովրդեան օգնու-
թեամբ զուշարար օրինակ մի տալ կը
մտադրէ Հայոց . տակաւին զօրք և սպայք
շարունակ կը յդուին Հայաստանի ներսերն
տակաւին ի Մուշ յուզարկուող ժամագիրք
և այլ եկեղեցական գրքեր վար կը դրուին

կլատոթընի վարդապետութիւնն այն
է թէ առանց ապատակի խօսք չհասկեար
թուրքն : Հայե՛ր , կլատոթըն վեհապետի
ազդեցութիւն ունի , և նորա բան հզօր է
քան զապտակ : Ու ստի ոռուսական լրա-
գիրք լեցուեցան այս ապտակի վերայ մեկ-
նութիւններով , և ոմանք առաջարկեցին
որ Անդղիա և Ռուսիա միաբանեալ ճիգ
մընեն զՀայկական Խնդիրն լուծելու հա-
մար : Մեծ Ծերունուոյն բերանն , Տէյլի
Նիւղ , շարունակեց հրացայտ հրահանդներ
ներշնչել անդլիական կառավարութեան .
Բաւ թէ արժան է որ Կիպրոսի Դաշնա-
գիրն պատռուի , առաջարկեց մինչև ան-
գամ որ անգլիացի Ծովակալի մառաջնոր-
դութեամբ նաւատորմ մի յդուի և ճն-
շում գործադրուի Դրան վերայ : Անգլիա-
ցի ազատասէր ու մարդասէրին այդ թե-
լադրութիւնք Սուլթանի ականջն կը
մտնեն դաշունի փափկութեամբ , և սա
կը զգայ զքաղաքական հարկն ի նպաստ
Հայոց բան մի ընելու , ոչ որպէս զի Հայք
նպաստաւորին այլ որպէս զի կլատոթըն
և նորա համախոհք լուեն :

Բայց պիտի չլուեն : Թրքական սուտե-
րու և պատիր խստմանց թմրեցուցիչ
ազդեցութիւնն սպառած է : Այժմ աշ-
խարհ գիտէ թէ Տաճկաստան կոչուած
երկիրն մեծ վարժոց մ'է անբարոյականու-
թեան , և Բ . Դուռ կոչուածն՝ սուտի և

զաքակրթութեան կը շարունակեն բարու-
յական ազգեցութիւն իդործ դնել ի
նպաստ Հայոց : Վերջին լուրն է թէ
Միջագային իրաւախոհութեան և Խաղա-
ղութեան Ընկերակցութիւնն որ այս ամառ
ի Փարիզ ժողով ըրաւ, նամակ մ'ուղղելով
առ Լորտ Սալիգալըրի՝ բացատրած է թէ
անգլիական կառավարութեան անկ է
Հայկական Խնդրոյ լուծման նախաձեռնու-
թիւնն, և թէլագրած է որ անգլիական
պաշտօնակալաց ներքեւ բնիկ ոստիկանու-
թիւն մի կազմակերպուի ի Հայաստան՝
զերկիրն պաշտպանելու համար :

44
ի Կարին . տակաւին Մուսա Պէկ կը գըտ-
նուի Վեհափառ Փատիչաձին հովանաւո-
րութեան ներքեւ և արքունի կոնտոլով կը
զբոսնու Պոսֆորի բազմազուարճ ջրե-
րուն վերայ :

Ինչո՞ւ այդպէս չլինի , քանի որ Պէկն,
իբրեւ հաւատարիմ հպատակ Սուլթանին,
ա՛յնքան ծառայութիւն մատուցած է
երկրին թէ՛ ի ժամանակս պատերազմաց
թէ՛ ի ժամանակս խաղաղութեան - իմա-
ցէք՝ այնքան Հայեր կտղոպատած է և զայն-
քանիս ի մամետականութիւն դարձուցած
է բռնի : Նորին վեհափառութիւնն՝ անգ-
լիական գեոպան Սըր Ուիլելմ Հուայթի
հետ տեսնուած միջոցին , ի 19 մայիսի ,
յայտարարած էր թէ փա՛ռք Աստուծոյ ,
իւր պետութեան հեռաւոր գաւառուց մէջ
«ապահովութիւն և հանդարտութիւն կը
տիրեն» և թէ Մուսայի դէմ եղած գան-
դատներն «բնաւ երբէք հաւատալի չեն»
քանզի «նմա ընծայուած գործերն բոլորո-
վին հակառակ են միսիւլման բնաւորու-
թեան և սովորութեան :» Այս խօսակ-
ցութիւն պատմուած է անգլիական «Պը-
լիու Պուք» ին մէջ և մեզ ճշգրիտ գաղա-
լիու Պուքը ին մէջ և մեզ ճշգրիտ գաղա-

լիու արարակուեր են , թէ աքսորեալ հայ-
րենակիցներ յետու իոչուեր են , զայդ և
զայդպախի միջոցներ չպիտի կրնամք նկա-
տել երաշխիք նոր ուղղութեան , քանդի
ինչ որ Բ . Դուռն ինքնին ընէ , առանց եւ-
րոպայի ուղղակի հսկողութեան Հայաստա-

նի մէջ, միայն թմրեցնելու կրնայ ծառա-
յել հանրային խիղճն և յետաձգել ճշմա-
րիտ դարմանն :

Հայե՛ր, մեք համոզուեր եմք դարս-
ւոր փորձառութեան շնորհիւ թէ ցորչափ
թուրք վարչութեան ներքե մնամք, մեր
բաժին պիտի լինի զուր տանջանք և անօ-
գուտ վաստակ, աղքատութիւնն և ան-
պատութիւնն : Բաւական է հինգ հա-
րիւր տարուան գերութիւնը : Այլ ևս բա-
ցուեր են մեր աչք և կը տեսնեմք մեր
շղթաներ . բացուեր են մեր բերաններ և
կը բողոքեմք առաջի աշխարհի : Կ'ըսենք
«ազատութիւն» «Հերիք այսչափ ցած գե-
րութիւն», զի գերի եմք, Հայեր, գերի՛,
ո՛հ, գերի :

Կ'աշխատիմք ու կ'աշխատիմք չարտ-
չար ու շարունակ, բայց մեր երեսաց քր-
տամիրք գոնէ մեր հաց ուտել չեմք կըր-
նար : Քուրդն իւր սրով, Զէրեէզն իւր
դաշունով, Թուրքն իւր բանտով կը վախ-
ցունեն ու կը կողոպտեն զմեզ : Գերի եմք,
Հայեր, այո՛, մեք գերի՛ :

Ոչխարն ու արջառն չենք սնուցաներ
ու բազմացուներ մեզ համար, չե՛նք սեր-
մաներ ու հնձեր մեզ համար, չե՛նք աշ-
խատիր, հաշուեր, տքնիր, շահիր մեզ հա-
մար, այլ մեր տեարց համար : Գերի եմք,
Հայե՛ր, գերի՛, ո՛հ, գերի՛ :

Բան մի չունիմք մեզ համար, ոչ

ձեռք ոչ սրունք, ոչ լեզու, ոչ խիկ գլուխ-
և սիրտ մեզ համար : Մեր արիւն ու աւ-
իւն, մեր իմացականութիւն և տաղանդ,
մեր ուշ և ուրուշ, մեր մարմին ու հոգի
նորա են—վեհապետին ու նորին կրօնակ-
ցաց : Մեր բռնաւոր տեարք կը գործա-
ծեն, կը կեղեւեն ու կը կտրտեն զմեզ որ-
պէս թէ խնձոր կամ տանձ լինէինք:
Գերի՛ եմք, Հայե՛ր, գերի՛, ո՛հ, գե-
րի՛ :

Թուրքն որ մեզ տիրած է, կը գործա-
ծէ զմեզ այնպէս որպէս թէ ոչխար, ձի,
կամ ջորի լինէինք : Ի՞նչ կ'ըսենմ . Թուրքն
կը գթայ փողոցի շներուն : Տէրն իւր ծն-
կան վերայ կը գգուէ զշնիկ : Հովիւն
ուսին վերայ կը կրէ գառներն : Զորեպա-
նըն կ'աշխատի գիրցունել իւր գրաստներ,
բայց մեր բռնաւոր ու անդութ տէրն,
Թուրքն, զմեզ քան զլուն նուազ կը յար-
գէ և նուազ գութ ունի մեզ քան գրաս-
տուց կամ ոչխարաց, և գոհ չլինելով
զմեզ իսուզելէ ու կթելէ, կը չարչարէ և
կը մորթէ զմեզ : Խոկ մեք, այ՛, մեք հո-
վիւ կը կոչեմք զգայլն որ կը փարատէ
զմեզ, հայրախնամ պետ կ'անուանեմք
զայն որ մեր անխիղճ հարստահարչաց գը-
լուխն է, կ'օրհնեմք զանուն այնորիկ որ
զմեզ անիծից տակ կը թաղէ, կը համ-
բուրեմք այն ձեռնոնոր զմեզ կը խղդէ, և
ծունը կը դնեմք առաջինորիկ որ բո-

ԸՐ ՊԵԺՈՎ զմեզ կը կոխստէ :

ԳԵՐԻՌ եմք, Հայեր, և, ո՛հ, ստորին
ևս զքան զգերի :

Կը զգամք զայս, կը զգայ զայս նաև
փոքր ի շատէ ամեն Հայ : Այս գիտակցու-
թիւն յոյժ բարեգուշակ է : Ներկայէս 20
տարի առաջ չկար ժողովրդային այդ պատ-
ռական գիտակցութիւն, ինչպէս և չկար
ժողովրդային հայրենասիրութիւնն : Վեր-
ջին տասն կամ քսան տարիներու մէջ մանա-
ւանդ արագալէս խմորիլ սկսեր է Հայ
Ազգն : Գերութեան գիտակցութիւնն և
հայրենեաց սէրն որքան զօրանայ յԱզգին,
այնքան ուելի արժանի կը լինի նա ազա-
տութեան և պատրաստ՝ ինքնավարու-
թեան : Եթէ բոլոր քաղաքակիրթ պետու-
թիւնք երբէք միաբանէին զՀայաստան
ինքնավար ընելու, ի զուր պիտի միաբա-
նէին եթէ մեք Հայքս ազատութեան և
հայրենեաց հրովար եփած չլինէինք :

Միսիթարուինք, ուրեմն, ո՛ս սիրանի
գերեկիցք իմ, աեսնելով թէ այն ներքին
յեղափոխութիւն որ անհրաժեշտ պայմա-
նըն ու ծնիչն է արտաքին յեղափոխու-
թեան, սկսեր է յառաջ երթալ Ազգին
մէջ :

Այդ ներքին պատրաստութեան հետ
մասնաւ որ հոգով պարտ է նաև յառաջ
տանիւ արտաքին պատրաստութիւն : Երա-
նի թէ ժամանակ ունենայինք դեռ բա-

զում տարիներ բոլորովին նույիրելու ներ-
քին մշակութեան կենսական գործին, բայց
քանի որ ապագայն մութ է, և քանի
որ միջազգային ընդհարմունք և քաղա-
քական երկիւղալի փոփոխութիւնք կրնան
յանկարծ տեղի ունենալ մօտաւոր ապա-
գայի մէջ, պէտք է որ արտաքին ոյժ և
միջոցներ պատրաստեմք փութով : ...

Պէտք է Հայ Գաղթականք յԵւրոպա
և յԱմերիկա, զինուորական կրթութիւն
առնուն, և կամաւորաց փոքրիկ բանակ
մի հանելու պատրաստ գանուին, որպէս
զի երբ պատեհ ժամն հնչէ, եւրոպացի և
Հայ զօրավարաց առաջնորդութեամբ կա-
րենան գրաէն օգնութեան և պաշտպանու-
թեան ձեռն կարկառել թրքահայոց : ...

Այս թելաղրութիւնք իրագործելի
են թէ ցնորական :

Հայե՛ր, ի ժողովի ա՛ստ այժմիկ ներ-
կայ են գոնէ երեսուն Հայեր որք անցեալ
հինգշարթի երեկոյ սովորեցան զինուորի
պէս կանգնիլ, ուղիղ, վեհ, բարձր ի գը-
լուխ : Կ'ըսեմ ձեզ թէ սոցա թիւ պիտի
աճի շուտով, և քիչ օրերէն, Նիւ եորքի և
շրջակայից Հայերէն հարիւր Հայեր պիտի
սովորին զինուորի պէս կանգնիլ, զինուո-
րի պէս շարժիլ և զինուորի պէս զար-
նել :

Երբ մարդ զարնել գիտէ, կը փափա-
քի զարնելալ : Այս օրինաց զօրութեամբ՝

յարտառահմանի պատրաստուած հայ խմ-
բե ըն պիտի սկսին փափաքիլ երթալ Հայ-
րենեաց համար գործածել իրենց հրացան
ու սույն :

Եւ պիտի գայ օր մի երբ Զէյթունի
քաջերն, Ապահունեաց քաջերն, կարնոյ և
վանայ և այլ գաւառաց քաջալանջ ու
հաստաբազուկ հայորդիք պիտի զգան
վեհ սարսուռ՝ լսելով աշխարհի չորս ծայ-
րէն փազող եկող Հայ զինուորաց ողջոյն
աւինալիք :

Եւ Հայոց բանակին մէջ 12 տարեկան
պատանեակներ, հայ աղջիկներ, հայ կի-
ներ. ու հայ վարդապետներ պիտի տեսնէ
աղջեալ թշնամին ու սքանչացեալ աշխար-
հըն :

Եւսուրբ ձայն մի պիտի գայ Մասեաց գագաթէն իբրև ձայն որոտման և պիտի գոռայ հայ բանակին—

Զա՛րկ աւերեալ աւանաց և քանդեալ
քառարագ համար :

Զա՛րկ կողոպտեալ վանօրէից և պըշ-
ծեալ եկեղեցեաց համար :

ԶԱՐԿ առեւանգեալ հարսանց և բըռ-
նաբարեալ կոլսերու համար :

ԶԱՐԿ պատռոյ, արդարութեան և պատռութեան մեծ դաստին համար,

ՕՐԵԿԱ:

ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳԻՔ

July 1986

Ի ՀԱՆԴԻՍԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ՀԱՅԿԱԿՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՑԱՄԵՐԻԿԱ.

1891

Տիտղոսը Ամենաալետ, Ազգի Տիկինայք և
Տեարք,

Հայկական Միութեան հինգերորդ
տարեդարձն կը տօնեմք այս երեկոյ ու-
րախութեամբ մի նման այնոր, զոր ծնողք
կը զգան իրենց զաւկի հինգերորդ տարե-
դարձի առթիւ։ Տղան ծնիլ դժուար է,
զայն հինգ տարեկան ընել շատ աւելի
դժուար է։ Վիճակագրութիւնք կը ցուց-
նեն թէ 100 մանկանց 71ն միայն 5 տարե-
կան հասակի կը հասնին ի Ֆրանսս, 64ն
միայն՝ յԱւստրիա, 61ն միայն յիտալիա։

Եթէ յիսուն տարիէ ի վեր Հայ աղ-
գին մէջ կազմուած զանազան ընկերու-
թեանց տեղեկազրութիւնն չինուած լի-
նէր, կարծեմ պիտի տեսնուէր թէ անոնց
հարիւրին երեքն կամ չորսն հազիւ հինգ
տարեկան եղած են:

Հայ ընկերութեանց այս սարսափելի
մահահամարն ըստ մասին կը բացատրուի
այնու զի ընկերութիւն կազմել մեր մէջ
նորաձեռութիւն եղած է, և բազումք ըն-
կերութիւն կազմած են լոկ որպէս զի ըն-
կերութիւն կոզմած լինին :

Կայ սակայն աւելի ընդհանուր պատ-
ճառ մի ընկերութեանց սակաւակեցու-
թեան ամեն ազգի և երկրի մէջ : Ամեն
տեսակ գործարանաւորութիւն բուսական,
կենդանական կամ ընկերական, իւր դե-
ռահաս հասակի մէջ փափուկ է և դիւրաւ
կը վիրաւորի, կը հիւանդանայ և կը մեռ-
նի : Ամեն ծաղիկ պառող չլինիր. ամեն
հաւկիթէ հաւ չելներ. ամեն երախայ
մարդ չափահաս չլինիր. և ոչ ամեն սկր-
ուած ընկերութիւն կ'ապրի : Նորակազմ
ընկերութիւնք ալ դեռահաս մանկանց ն-
ման նշաւակ են տեսակ տեսակ ջերմերու
և ցնցումներու, որք յաճախ մահաբեր կը
լինին :

Կը դանուին անշուշտ քաջառողջ մա-
նուկներ որք գրեթէ երբէք չեն հիւանդա-
նար, քաջառողջ ընկերութիւններ ալ կան,
թէև հազուագիւտ : Կը խոստավանիմք թէ
Հայկական Միութիւնն բաւական հիւան-
դու մանկութիւն մ'ունեցած է : Այս ե-
րեկոյ չեմք պարծիր անոր անցեալ հիւան-
դութեանց վերայ, այլ կուրախանամք որ
բժշկուած է միշտ, և այնքան աւելի կ'ու-

բախսանամք որքան դժուար եղած է մեզ
այդ հիւանդութիւններէն բժշկել մեր սի-
րեցեալ Միութիւնն :

Բայց թէև հիւանդու եղած է Միու-
թիւնս, եղած չէ անօգուտ : Ընդհակառա-
կըն, գնահատելի բազմադիմի ոչտակա-
րութիւն մ'ունեցած է այն— վառարան
մ'եղած է հայերէն լեզուի և ազգային
զգացմանց ի նիւ Եորք, օգնած է աղքա-
տին, գործ գտած է անգործին, այցելած
է հիւանդին, յուղարկած է մեռեալն, օ-
ժանդակած է հրկիքեալ Զէյթունի շինու-
թեան, Ա. Փրկչի Ազգ . Հիւանդանոցի
վերաշինութեան և Վուսթըրի Հայկ . ե-
կեղեցւոյ կառուցման :

Ես աւելի կը բազմամ այս ընկերու-
թեան հիւանդութեանց վերայ խօսիլ այ-
ժմ քան թէ նորա գործոց վերայ : Զայս
կ'ընեմ վասն զի Հայկ . Միութեան ախ-
տաբանութիւնն բուն հայ ազգին ախտա-
բանութիւնն է . և անոր բուժարանութիւ-
նն ևս Հայ ցեղին բուժաբանութիւնն է :

Տաճկաստանի ամեն գաւառէն ամեն
քրիստոնէական յարանու անութենէ ան-
դամունի այս ընկերութիւնն, ինչպէս նաև
ընկերական և կրթական յոյժ տարբեր
կարգերու պատկանող անդամներ :

Կրնամք Եղնկայ բացատրութեամբ կո-
չել Հայկ . Միութիւնն «ի չհամազգեաց լը-
ծեալ կառք զարմանալիք :» Եւ ինքնին

կ'երևի թէ այսպիսի կառք մի վարել որ-
քան դժուարին է : Զայս ի փորձոյ գիտեմ
ես ինքնու : Մեր ընկերութեանց մէջ շատ
անդամ աւելորդ ժամանակ կը վատնուի
և կոխ կը ծագի անտի զի մեք Զայքս
կագապահութեան (discipline) վարժուած
չեմք : Չեմ ըսեր թէ ընկերութիւն կաղ-
մելու և կանոնաւոր նստեր ընելու սովո-
րած չեմք, վասն զի այդպէս ըսել պիտի
լինէր ճշմարտութեան փոքր մասն ըսել :
Մեք ոչ մէկ բանի մէջ կարգապահութիւն
գիտեմք : Եւ ի՞նչ է կարգապահութիւն—
կազմակերպեալ մարմին մի, թէ դպրոց
լինի, թէ ընկերութիւն, թէ բանակ, իւր
կարգ ու կանոն ունի, այդ կարգոց ու
կանոնաց համեմատ անդամոց շարժիլն է
կարգապահութիւն : Արդ ցաւալի է ըսել
թէ մեր ազգին մէջ կարգապահ լինելու
կարողութիւնն շատ ակարացած է : Երկար
դարերէ ի վեր թրքին հպատակ և գերի
լինելով, Զայքս վախով կառավարուած
եմք, օտարի և թշնամոյ օրինաց հնա-
զանդած եմք յահէ ոչ թէ ի սիրոյ օրի-
նաց : Հոսա Մօնթէսքիէօի, քաղաքային ա-
ռաքինութիւնն է քաղաքացւոյն սէրն և
յարգանքն երկրին օրինաց համար : Մեք
Զայքս այլակրօն և բռնաւոր տէրութեան
ներքե գանուելով՝ այդ քաղաքային առա-
քինութեն, ն զրկուած եմք : Սիրով և յար-
գանօք հնազանդիլ չգիտեմք, մանաւանդ

Տաճկաստանի Հայքս օտարին միայն բիրտ
չօշափելի զօրութեան առջև խոնարհիլ
գիտեմք : Եթէ ատենապետն զմեզ ի
կարգ հրաւիրէ, կը վիրաւորիմք : Որքան
ալ վիրաւորիչ լինին մեր բացատրութիւնք
որքան ալ չնչարանեմք, կ'ուզեմք որ ա-
տենապետն դէմ չելնէ, եթէ ելնէ՝ ան-
պատութիւն կը չամարիմք մեր անձին,
թէ և Մեծն կլատոթըն ինքն անցեալ օր
Բառամէնթին մէջ ի կարգ հրաւիրուե-
ցաւ : Կը կարծէ՞ք թէ վիրաւորուեցաւ
նա :

Գենէ անոնք որք ընկերութեանս ման-
կութիւնն լաւ կը ճանաչեն, կը մտածեն
թէ անոր հիւանդութեանց մեծագոյն
պատճառն դեռ չյիշեցի, և թէ անպատ-
շաճ պիտի համարիմ յիշել զայն : Յիշեմ
պիտի սակայն, քանզի մեր ընկերութեան և
մեր ազգին հիւանդութեանց գլխաւոր
պատճառն է այն : Ժամանակաւ, ասկէ 30
—40 տարի առաջ, Հ. Ղեւոնդ Ալիշան յա-
ճախ կը գրէր այս խնդրոյ վերայ ԲՍ.ԶՄ.Ա-
ՎիՊի մէջ : Հ. ինձինեան Հայաստանեայց
Հնախօսութեան Բ. հատորին մէջ ընդար-
ձակօրէն խօսած է նոյն ինդրոյն վերայ :
Այժմու ինձ ծանօթ ազգային թերթերու
մէջ միայն մէկ հատ կայ որ այս մահու և
կենաց խնդրոյն վերայ սոտէպ կը գրէ հա-
մարձակ լեզուաւ և աղնիւ ոգւով, այն է
ՄՃԱկն թիֆլիզի :

Ի՞նչ է այս մեծ պատճառն որ Հայկ։
Միութեան մէջ ի հանդէս եկած և անոր
հիւանդութեանց և ցնցումներուն գլխաւոր
արտադրիչն եղած է։

Այդ պատճառին անունն է Հայկական
մոլութիւնք, որք են երկպառակութիւն,
նախանձ, քսութիւն, մատնութիւն և ամ-
բարտաւ անութիւն։ Երկար ատեն կը միխ-
թարէի ես զիս ըսելով թէ ասոնք ամեն
ազգի մէջ ալ կը գտնուին։ բայց վերջին
ամաց փորձառութիւնս և գիտողութիւն-
քըս համոզեցին զիս թէ արդարեւ մեր
ազգին մէջ աւելի շատ կը գտնուին, մեր
քաղաքական հավատակ վիճակ յատկապէս
նպաստած լինելով այդ ախտերու տարած-
ման մեր մէջ։

Ես այժմ բարոյախօսել չեմ եկած այս
նիւթոյ վերայ, այլ կը շատանամ ըսելով
թէ այս ախտեր, որք շատ ճարակած են
մեր ազգային բնաւորութեան մէջ, յոյժ-
ծանր նշանակութիւն ունին և մեր ապա-
գային քան զամնայն ահաւոր վտանգնե-
րն անոնցմէ կը ծնին այժմ և պիտի ծնին
յեայ։ Ինչ որ Հայկ։ Միութեան, այս փո-
քըր ընկերութեան, մէջ պատահած է, նոյ-
նըն պատահած է ամեն հայ ընկերու-
թեանց մէջ, և բազում օգտակար ընկե-
րութեանց տարածամ մահն այս ախտե-
րուն կը պարտիմք։

Մեք Հայքս կ'որոտամք Սուլթաններու

դէմ, Մուսա Պէկերու դէմ, արտաքին
թշնամեաց դէմ, բայց, աւաղ, չեմք մը-
տածէր թէ թշնամեաց քան զամենայն
սարսափելին ունիմք ի մեզ «Հայու նա-
խանձն» որպէս կ'ըսէ ՄՇԱԿ։ Այս նախան-
ձն է որ կը խանդարէ կարգն կը քակէ
ընկերութիւնն, կը պառակտէ միութիւնն,
կը կործանէ ազգն։ Այն կործանեց յան-
ցելումն ազգային իշխանութեան գահն,
և կրնայ կործանել նորէն յապագային։
Մեր այս ազգային ախտերն են որք այժմ
կը տկարացունեն զմեղ, արգելք կը լի-
նին մեր ուժերու կեգրոնացման, կը վիժե-
ցունեն ազգօգուտ ձեռնարկներն և թոյլ
չեն տար զՀայկ։ դատն աւելի ազգուա-
պէս պաշտպանելու։ Օ՛, Հայեր, գիտցէ՛ք,
գիտցէ՛ք, թէկ' Եւրոպեան և Ամերիկեան
Մամուն չգտարի Հայկ։ Խնդրոյ վերայ
խօսելէ, թէկ Բր. Բառլամէնթն ամեն
նասի մէջ վիճի մեր վերայ, թէկ բոլոր
քաղաքագէտք համակրութիւն յայտնեն
մեր աղէտից համար, թէկ Եւրոպա վեհա-
ժողով ընէ մեր Խնդրոյն համար, թէկ
բանակք և նաւատորմք պիտութեանց մի-
անան զմեղ փրկելու համար, չպիտի ի-
րօք և տեւական կերպիւ ազատիմք եթէ
մեր ախտերուն գերի մնամք. չպիտի կը-
նամք ազգային ինքնօրինութեան գահուն
վերայ բազմիլ երկար՝ ցորչափ նախանձն
ու քսութիւնն շարունակեն անոր հիմուն-

քն սարուել : Ո՞չ , չխաբուիք , թագն չէ
որ զմարդ թագաւոր կ'ընէ , պարտ է ու-
նենալ թագ կը լու արժանի գլուխ : Զա-
նանք իբրև աղդ , իբրև ցեղ , կրթուիլ և
աղնուանալ , բարձր բռնել մեր գլուխ ,
բարձր՝ մեր սկզբանց դրօշ , մինչ թագ
կամ ինքնօրինութիւն կը խնդրեմք եւ-
րւպայէն :

Անշուշտ բարի և առաքինի Հայեր շատ
կան . մեր Հայկ . Միութիւնն ալ այնպի-
սեաց կը պարտի իւր գոյութիւն և կեանք ,
բայց ստիպուած եմք խոսսովանիլ թէ
շատուոր են վատերն : Եւ որ աւելի ցա-
ւալի է , այդ վատերու առջև ասպարէզն
բաց կը թողուն բարի Հայերն : Այս շա-
բաթ Հայ երիտասարդ մի պատմեց ինձ
իւր մէկ փորձառութիւն : Ինքն , ոստայ-
նանկ , կը գործէր նիւ Եորքի մետաքոր
գործարանի մի մէջ . օր մի թելերն խառ-
նուեցան : Ամերիկացի գործաւոր մի օգնեց
մեր երիտասարդին , և այդ պահուն Հայ
գործաւոր մի գալոտ խնդրեց ամերիկա-
ցին թոյլ տալ իրեն որ մկրաստաւ կտըր-
ուէ թելերն . Ասոր դէմ կեցաւ Ամերիկա-
ցին և ապա բանն պատմեց Հայոն : Այդ
երիտասարդ , իւր հայրենակցին թելերն
կտրաելու համար մկրաստ առնող այդ
երիտասարդ , Հայկ . Միութեան մէջ պաշ-
տօն վարած , այլ և այլ ընկերութեանց
անդամակցած , աղքասէր , հայրենասէր ,

անձնուէր երիտասարդ է . . . : Կրնայի դժ-
բազդաբար այս պիսի բազմաթիւ օրինակ-
ներ այժմ յիշել քսուներու , չարակամ-
ներու և եղբայրատեացներու որք «մեծ
հայրենասէր» կը կոչուին երբեմն բանգէտ
երեւցողներու տնդամ ըլթունքն : Օ՛ , ոչ ,
ոչ , ՈՉ , նախանձոտ , զրպարտիչ , վատ
Հայն չկրնար աղքասէր լինիլ , Հայուն չա-
րիք ընողն չկրնար սիրել գՀայաստան , ո՛չ
կարէ չարն սիրել զագն , ինչպէս ոչ կա-
րէ քարն թուչիլ : Զիսաբուիք եղբարք :
Մեր մէջ Հայեր կան որք աղքասէր կը
ձեանան , հայրենասէր կը հռչակուին , կը
խօսին , կը պօռան , և սակայն այնքան վատ
են զի եթէ պէկութիւն ունենային Մուսա
Պէկ կը լինէին , եթէ Հայաստանի կուսա-
կալ կարգուէին , Վասակ կը լինէին , եթէ
զօրավար լինէին Մերուժան կը լինէին , ե-
թէ քահանայ լինէին , Վեստ Սարգիս կը
լինէին :

Ի՞նչպէս կրնայ աղքն աղատիլ այսպի-
սեաց ձեռքէն : Պոլսոյ մէջ յեղափոխական
յանձնախումբ մի այսպիսեաց մի . քանին
սպաննեց : Միթէ վատ Հայերն կրնա՞նք
աղնուացունել մի քանին սպաննելով : Ու-
րագործական միջոցներով , տինամիթով և
գալոտ գաւաղրութեամբք բարի փաստ մի
յառաջ տանելու դէմ եմ ես : Եթէ վատ
Հայ մի ձեռքս անցնի , անոր մէկ մազին
վսաս չեմ ըներ : Բայց չեմ ըներ զայն ինձ

բարեկամ, չեմ կոչեր զնա ազգասէր, չեմ
տար նմա պաշտօն, չեմ ընդունիր զայն
ընկերութեանս անդամ, եթէ անդամ է
արդէն՝ կ'արտաքսեմ զնա, և բոլոր ու-
ժով կ'աշխատիմ գուրս պահել զնա ազ-
գային գործերու բոլոր ըրջանակներէն, և
կ'ըսեմ առ որդիս Մերուժանայ, «Ելէք ի
մէնջ, ի բաց գնայք, Սնէծք ոյց չեն ճըշ-
մարիս Հայք: Զի՞ կայք . ի մէնջ ի բաց ի
բաց գնայք» ի բաց' ի բաց' . . . :

Եւ որպէս զի ազգին մէջէն պակսի
նախանձն և մասունք նորին, պարտիմք
բարոյական գաստիարակութեան հոգ տա-
նիլ ի Հայ վարժարանս, և պարտիմք Մ-
ՇԱԿԻ նման աղդ . բարոյախօսութեան յա-
տուկ բաժին ունեցողթերթերն տարածել
ազգին մէջ: Այս է հիմնական գարմանն:

Միրելի ընկերք և ազնիւ հանդիսա-
կանք, ներեցէք երկարութեան բանիցս և
դառնութեան բանիցս: Խոյսուեցան ձեռ
դառնութեան բանիցս: Միսի-
սրտեր, թողէք գնեմ բալասան: Միութիւնն
թարուեցէք տեսնելով զՀայկ. Միութիւնն
հնդամեայ եղած, կենդանի, բարդաւած:
Միսիթարուեցէք տեսնելով թէ ազգին
բարի մասն, թէև նեղութեամբ, կը յաղ-
թէ չար մասին, և պիտի միշտ յաղթէ:
Թէ չար մասին, և պիտի միշտ յաղթէ:
Դիմացէք մեր՝ այս տուառն օպտար հսկոյ վե-

րաց անկաւած և արմատ բռնած: Հսկո-
ւոցէք անոր ծաղկանց լուրումն. դոլա-
րէք անոր քաղցրիկ հավանայն ներքեւ և

գնացէք ըսել թէ Հայկ. Միութիւնն չոր-
շած չէ . ո'չ, մեռած չէ այն Միութիւնն որ
կը շարժի, կը քալէ, կ'ընթանայ փշրելով
ընդ ոտիւք խոչ և խափան, և կոխելով իւր
թշնամեաց գլխոյն վերայ: Կեցցէ՛ Հայ-
կական Միութիւնն յԱմերիկա:

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ

Սիրելի Հայրենակիցք,
Առակօք և օրինակօք պիտի խօսիմ
Ճեղ այսօր : (1)

Երբ առաջին անգամ յ՛նութը բարթա-
լով այցելեցի թելի գործարանն— որ գի-
տէք թէ իւր տեսակին մէջ մեծագոյնն է
յաշխարհի — յափշտակուեցայ ստորնա-
գոյն յարկին վերայ ներկայացուող տեսա-
րանէն : Իմ առաջնորդ կ'ըսէր թէ գեռ
բազում յարկեր կը մնայր մեղ այցելել և
ուստի պարտէինք ճեպէլ, իսկ ես կը
խնդրէի որ կենայինք անդ տակաւին և ես
կարենայի պահ մ'ես ի զնին կալ հիսո-
քանչ տեսարանին :

Ահաւասիկ թէ ինչ կը տեսնէի անդ—
Հնոցէն երկաթի ահագին հրաշէկ զան-
գուած մի հանելով կը մատուցանէին զայն

(1) Այս ատենախօսութիւն, ինչ ինչ
եղանակաւորութեամբք, կրկնած եմ 1891
ին ի Փրովիտաէնս և ի Թրոյ :

շարք մի բոլորակ ծակերու մեծագունին,
շոգեշարժ մեքենայ մի կը կատարէր իւր
գործ, և ահա երկաթն խլացուցիչ շշմամբ
ծակէն կանցնէր և՝ դիցուք մէկ ոտք եր-
կայնութեան վերածուած՝ դուրս կ'ենէր
միւս կողմէն : Յայնժամ կը մատուցանէին
զայն երկրորդ ծակին, և այսպէս հետ զ-
հետէ աւելի փոքր ծակերուն, այնպէս որ
երկաթի կոչտ զանգուածն՝ վերջին ծակէն
անցնելէ յետոյ՝ հինգ կամ վեց մէթր եր-
կայնութեամբ հաստ պարանի մի վերած-
ուած կը գտնուէր : Գործաւորք խոշոր ու-
նելիներ կամ ձողեր ունէին ի ձեռին և
մեծ արթնութեամբ ու ճարպկութեամբ
կը բռնէին զերկաթն կամ ուղղութիւն
կուտային օձակերպ պարանին և կը պաշտ-
պանէին իրենք զիրենք երբ սա՝ կրակէ վի-
շապի մի պէս՝ դուրս կը վազէր ծակէն ու
դառնալով կը գալարէր երկաթէ տախ-
տակամածին վերայ, քանզի պատահած է
որ անշգոյշ գործաւորի մի զարնուելով՝
ի քթթել ական երկուքի բաժնած է զայն
մէջքէն :

Այդ տեսարան հիանալի էր : Մարտ-
կային հանճարն կը պատերազմէր անդ բը-
նութեան ուժեղագոյն մետաղին՝ երկա-
թին՝ գէմ : Ծակին բերանին դրուած պա-
հուն՝ երկաթն վայրագ շշմամբ կ'աղաղա-
կէր թէ չուզէր անցնիլ նեղ ծակէն ու
բարակնալ . անդէն՝ շոգեշարժ մաքենայն

յանուն մարդկային հանճարոյ կ'որստայր
անդիմագրելի հրամանն— Անցնի՛ս պիտի ·
և երկաթն կատաղի սուլբամբ կ'անցնէր :

Այդ աեսարանի վերայ հիանալով՝ կը
հիանայի մարդկային հանճարին վերայ, որ
հզօր է քան զերկաթ, որ հրոյ և ջրոյ բե-
րանն անդամ սանձ կը դնէ և բնութեան
ահաւոր տարբերն կը վարէ ու կը գործա-
ծէ իբրև սպասաւոր : Եւ կը մտածէի թէ
մարդուն յաղթահարիչ ուժն մտքին ոյժն
է, ոչ մարմնայն : Մարդ որքան և ուժեղ
լինի մարմնով, և որքան կատաղի բար-
կութեամբ յարձակի երկաթի այդ ահա-
գին զանդուածի վերայ, չզօրեր բնաւ
թեքել զայն, թէպէտ և կոտրտէ իւր իսկ
ձեռքելն :

Օրէնքներ կան ի բնութեան . մար-
դուն հանճարն կը հնարի ճանաչել այդ
օրէնքներ և այդ օրինաց համաձայն մար-
տնչելով է որ կրնայ յաղթել տարբերաց :

Օրէնք է թէ ջերմութիւնն կը կա-
կուզունէ՝ մինչև իսկ կը հալէ ամուր
երկաթն : Օրէնք է թէ ջերմագին երկա-
թն աւելի դիւրաւ կը տարածուի, կը կը-
ռանուի : Գիտնալով զայս օրէնք, մարդն
նախ կը ջեռուցանէ երկաթի զանդուածն,
կը կարմրցունէ զայն, և ապա անոր հետ
կը խաղայ— կը թեքէ, կ'երկնցունէ, կը
տափակցունէ, կը բարտկցունէ և ինչ որ
ուզէ կ'ընէ զայն :

Հայրե՛նակիցք իմ, այս օրինակ շատ
յատակ կերպիւ կը ցուցնէ մեղ թէ բար-
կանալով կամ լոկ բազկի ուժով չէ որ
մարդ յաղթական կը լինի տարերաց ա-
հագին ուժին, այլ օրէնքներն սովորելով և
ի գործ դնելով :

Բայց այնքան պարզ չերեւիր նոյն ճըշ-
մարտութիւնն երբ բարյական կարդի ի-
րաց վերայ գարձունելով ըսենք թէ աղ-
գաց և ազանց, իշխանութեանց ու պե-
տութեանց համար ևս կան օրէնքներ այն-
պէս անվախով և հաստատուն որպէս եր-
կաթին՝ ջրոյն և հրոյն համար, — և թէ
ինչպէս օրէնքի՛ համեմատ գործելով կո-
րու կը լինիմք երկաթի ահագին կոչան
մազի պէս բարակ թելի վերածել, նոյն-
պէս ալ օրէնքի՛ համաձայն աշխատելով
միայն հնար է զկոչտ ժողովուրդն նրբա-
ցունել, զփոքրն մեծցունել, զտկորն զօ-
րացունել, զցրուեալն ժողովել և զկազ-
մալուծեալն կազմակերպել :

Հայե՛ր, եթէ ես անդադար կը յեղ-
յեղեմ թէ կը հաւատամ ազգիս ապա-
գային, Հայու փառաւոր հնարաւորու-
թեանց, մի՛ լիցի կարծել թէ կոյր,
անտրամաբան հաւատով, հայրենասիրա-
կան արբեցութեամբ կը յեղյեղեմ : Ես
օրէնքի կը հաւատամ, և կը հոչակեմ թէ
կարելի է մեր ազգ փրկել, զօրացունել
և բարձրացունել՝ յարգելու պայմանաւ

այն օրէնքներ որոց համեմատ կրնայ աղդ
մի զօրանալ ու բարձրանալ :

Զերմութիւնն ինչպէս միջոց է երկա-
թիւն վերայ կրթիչ գործողութիւն կատա-
րելու համար, նոյնպէս և բարոյական ջեր-
մութիւնն, բարկութիւնն, եռանդն, հայ-
րենաւիրական բորբոքութիւնն հարկաւոր է
մեր աղդին կրթութեանն համար: Մաս-
նաւորելով խօսքու գաղթական Հայոց վե-
րայ, կրնամ ըսել թէ նոքա տաքցած են,
և ոմանք կրակ գարձած: Կը համարձա-
կիմ նաեւ ըսել թէ և ես համեստ բաժին
մ'ունեցայ հայ գաղթային մարմինն ջեռու-
ցանելու աշխատութեան մէջ. և երբ տե-
սայ թէ բաւական տաքցած է, աշխատե-
ցայ փութով թեքել, կրթել, ձեւի բերել
զայն, և այդ նպատակաւ ալ կազմել ջա-
նացի զինուորական կրթութեան ընկերու-
թիւն մի ի նիւ եորք: Բարկութեամբ
զարնել բարբարոսի է, լու զարնելու հա-
մար արուեստով և գիտնօրին պէտք է զար-
նել, և զարնելու արուեստն ալ՝ ուրիշ ա-
մեն արուեստի պէս՝ պէտք է սովորել:
Ի՞նչ մեծ հաճոյք էր ինձ երթալ ամեն
հինգշաբթի երեկոյ մասնակցիլ այդ զին-
ուորական մարզանաց, և ուեսնել թէ ի՞նչ-
պէս մեր նիւ Եսրքի հայ գաղթականաց
զանգուածն կամաց կամաց կուգար անց-
կերէլ կրթութեան առաջին և երկուրդ ծա-
նիլ, և ի՞նչպէս զինուորական մարդիկ-
կերէն, և ի՞նչպէս զինուորական:


ներէ կազմեալ տողն, թէլի գործանոցին
մէջ գամ քան զգամ երկնցող պարանին
նման, շարթէ շաբաթ կ'երկննար: Ի՞նչ-
պէս դանդաղ ու յամրացարժ գաւառա-
ցիներ արագ շարժիլ կը սովորէին, կախ-
գլուխներ գրեթէ սիգաճեմ կը լինէին,
արեւելեան թմրութեան մէջ մրափառնե-
րն ուշադիր և սթափի կը դանուէին, և որ
աւելին է՝ կը վարժուէին անսալ և փու-
թով կատարել հրամաններն այնպիսի մար-
դիչի որ ոչ մարակ ունէր և ոչ իշխանու-
թիւն զոք պատժելու: «ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԳՈՒՆԴ» էր հրապուրիչ անունն այդ ըն-
կերութեան, և կրնար նկատուիլ արդա-
րեւ կորիցն ճշմարիտ արարատեան գնդի
մի: Խումբ մի հայեր էին, ամեն հայ գտ
ւառի ներկայացուցիչներ, որք ի մի վայր
եկած կ'ընտելանային սուխին և հրացանի,
կ'ընտանենային իրարու, կը թեքէին մարմ-
նով և բնաւորութեամբ թանկագին մար-
զանաց և անգին կարգապահութեան:

Ես կը յուսացի թէ այս մեր համեստ
սկզբնաւորութիւն խթան կը լինէր Ամե-
րիկեան և ուրիշ հայ գաղթականութեանց.
և միքաւի Ռւսարրի Հայոց մէջ ևս կազ-
մուեցաւ նմանօրինակ ընկերութիւն մի:
Այլ ա՛ւաղ, ցրեցան այս երկու ընկերակ-
ցութիւնք վեց ամսուան մէջ չնորհիւ այն
ողբարի ախտերու զորս «Հայկական մո-
լութիւնք» կը կոչեմք: Եսականութեամբ

և ամբարհաւաճութեամբ ախտաւորեալ
գործիչի սւրաւմն խաւարամիտ արբանեա-
կըք ամեն ջանք ու դաւ ի գործ գրին
մարզիկներն ցրտացնելով որելու ...
Զինուորական կրթութիւնն զնոյ ժողով-
ուրդն Փիզիքապէս և բարոյապէս միտն-
գամայն կրթելու գերազանց միջոցն էր,
որոյ հետ զուգընթաց պարագէր յառաջա-
նալ նաև առաջնորդ գործիչներու կազ-
մաւորումն ի մի կեզրոնական և համե-
րաշխ մարմին : Մեր գործիչք ալ պարագ-
ին եռական առանձնութեան շրջանէն ել-
նել և թեքիլ, միակիլ իրարու, միանալ և
հաստատուն և ապահով ոյժ մի կազմել :
Հոյ Սչխարհին մէջ աղաղակոլ կարօտու-
թիւն կոյ հզօր և պատկառելի հեղինա-
կութեան մի ձայնին, և զայդ հեղինա-
կութիւն գործիչներու կեդրոնացեալ խմ-
բակ մի կրնայ ստանալ և գործածել յօդուտ
Հայրենեաց գատախն : Այդ համոզմամբ
խնդրեցի մեր ծանօթ գործիչներէն ի
ֆրանսա և յԱնդլիա՝ որ փոխագործ բա-
նաւոր գիշմամբք միանան ի մի մարտին :
Ոմն յօժոր կ'երեւի և այլք դժկամակ :
Յայտնի է թէ խնդիրն ինծի պէս անհշան
և խոնարհ անձի կողմոնէ լինելով շատ
չյարգուիր, մանաւանդ թէ յօժ դժուոր
է խնդրուած միութիւնն : Այժմ նիւ եոր-
քի մէջ առ այս նպաստակ աշխատելու յա-
տուկ նպաստակաւ կազմեալ Հոյ Հայրենա-

սիրաց Յանձնախումբ մի կայ որ եռան-
գագին կը գործէ ոչ միայն գործիչներն
այլ և Հայ Գաղթական Սչխարհն շարժե-
լու գէպ ի տիեզերական միաբանութիւն
որ զօրութեան էական պայմանն է և ինք-
նորէն լինելու լուտագոյն պատրաստու-
թիւնն :

Հայրենակիցք իմ, չեմ կարծեր թէ
ոյսականով կարող եղայ պարզել ձեզ այն
մեծ ժաղափար որ կը տիրէ ինձ, և աւե-
լի երկար խօսելով ալ չպիտի կարենոյի :
Դեռ շատ և շատ խօսիլ պէտք պիտի լի-
նի, համոզել, փաստաբանել, բացարել
անդագար : Փորձերն ու ժամանակն ալ
պիտի օգնեն մեզ հասկնալու թէ լոկ բար-
կանալ, լոկ բազմալ, լոկ զգալ բաւական
չէ, պարտ է գիտնալ, սովորել, կրթուել և
կազմակերպուել . պէտք է որ անիրան և
անկերպարան այս վիճակն ելնէ Հոյ Գաղ-
թային Սչխարհն, ծփացող ժողովուրդն
լինի իրան և իւր ընտրելագոյն զարգա-
ցեալ անդամք լինին իւր կերպարան . կազ-
մուի կերպոն մի հայութեան լուտագոյն
մարմացումներն և ազգային ինքնանձա-
նաշութեան բարձրագոյն արտայառու-
թիւնքն եղող Հայերով, և այդ կերպոն
լինի գլուխին ժողովրդային իրանին, լինի
բերանն հայկական խորհրդաց և ըղձից, և
զեկավարէ ազգային գումարման գէպ ի
ուորբ նպաստակին



7/ XI 1922

Ա. Ա.

Ա. Ա.

ՅԱԿԱՐ

	Երես
<i>Աղդ</i>	5
<i>Զէյթուն</i>	9
<i>Սուր</i>	14
<i>Հնա՞ր է</i>	23
<i>Դրան Գաղտնի Շալարերականը</i>	32
<i>Զարկ</i>	41
<i>Ներքին Վասանդք</i>	51
<i>Յաղթութիւն Օրէնքի Ուժով</i>	62



Մ . Ա . ԳԱԲՐԻԵԼԵԱՆԻ

ԵՇԽԵՏՍՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ 1879: Ապա-
ռած :

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՁԵԱԼՆ
ՈՒ ԱՊԱԴԱՑՆ , 1888 , «Արեւելք»ի մէջ նա-
խապէս հրատարակուած : Գին մէկ ֆրանգ
(20 սէնթ) :

ԱՐՈՒԵԱՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ , 1891 .
21 դաս , 16 պատկերօք և յաւելուածով/
ազգային և օտար հատընտիր ընթերցուա-
ծոց : Գին 5 ֆրանգ (1 տողար) :

ԽՐԻՄԵԱՆ , ՀԱՅՐԻԿ , 1892 : Գին 50 սան-
թիմ (10 սէնթ) :

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ , 1893 : Գին մէկ
ֆրանգ (20 սէնթ) :

2288

2013



